

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

### 16 Տարիներ Ետք՝ Կասկածները Չեն Փարատած

1999-ի Հոկտեմբեր 27-ին Հաստատանի խորհրդարանին ներս տեղի ունեցած ահաբեկչությունն անցած 16 տարիներ եւ Հաստատան տակալին կը գտնուի այդ ոմրագործութեան բարոյաեոգեբանական եւ քաղաքական ազդեցութեան տակ:

16 տարիներ առաջ, Նաիրի Յունանեանի գլխաւորած ահաբեկիչներու խումբը ներխուժեց Հաստատանի Ազգային Ժողովի նիստերու դահլիճ, սպաննելով կասկածարութեան եւ խորհրդարանի անդամներ, գլխաւորութեամբ Ազգային Ժողովի նախագահ Կարէն Դեմիրճեանի եւ Վարչապետ Վազգէն Սարգսեանի:

Այդ օրերուն այս երկու եզակի դէմքերը կը վայելէին մեծ ժողովրդականութիւն եւ հասարակութիւնը մեծ յոյսեր կապած էր անոնց միջեւ ստեղծուած քաղաքական դաշինքի սպասուող արդիւններուն հետ:

Դեմիրճեան-Սարգսեան դաշինքը սակայն կը մտահոգէր Բոսնիոյ Գոչարեանին, որ բացայայտ կեղծուած ընտրութիւններու շնորհիւ նախագահի աթոռին նստելէ կարճ ժամանակ ետք, յայտնուած էր Անգլիոյ Բազուիի դերին մէջ՝ կորսնցնելով իր ազդեցութիւնը երկրէն ներս ընթացող քաղաքական եւ այլ գործընթացներուն վրայ:

Ահաբեկչութեան յաջորդող բոլոր կասկածները կ'երթային նախագահական պալատի ուղղութեամբ: Այդ կասկածները աւելի խորացան երբ Գոչարեան անձնապէս գնաց Խորհրդարան, ոմրագործներուն հետ բանակցելու եւ ապա անվտանգ դուրս գալով յայտարարեց, որ անոնց ետին քաղաքական այլ ուժեր չկան:

Յունանեանի ու անոր ընկերներու երկարաշունչ դատավարութիւնը վերածուեցաւ իսկական բատերգութեան մը եւ իշխանութիւնները ամէն ինչ ըրին, դատավարութիւնը տանելու իրենց մատնանշած ուղղութեամբ:

Դեմիրճեանի եւ Սարգսեանի սպանութեամբ ոչ միայն փոխուեցաւ քաղաքական իրավիճակը, այլ նաեւ երկրէն ներս հիմը դրուեցաւ քաղաքացիական համակարգի մը, որու ազդեցութեան տակ կը կրի Հայաստանի ժողովուրդը մինչեւ օրս ու անոր հետեւանով արտագաղթի ալիքը կը շարունակուի, հանդիսանալով երկրի գիմագրաւած մեծագոյն վտանգը:

16 տարիներ անցած են, սակայն կասկածները չեն փարատած: Մատեր յոյս ունին, որ օր մը պիտի բացայայտուին Հոկտեմբեր 27-ի իսկական պատասխանատուները, սակայն հոն հասնելու համար պէտք է սպասել տակալին՝ իշխանափոխութեան:

ՄԱՍԻՍ

### Մինսկի խումբի Նախագահները Ղարաբաղի Մէջ Քննարկած են Սահմանի Իրավիճակը

Երեւանէն Ստեփանակերտ մեկնելով, Մինսկի խումբի համախաղաղահաները Հոկտեմբեր 26-ին հանդիպում ունեցած են նախագահ Բակո Սահակեանի հետ: Լեւոնալին Ղարաբաղի նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Դաւիթ Բաբայեանի փոխանցմամբ,



Մինսկի խումբի համախաղաղահաներու հանդիպումը նախագահ Բակո Սահակեանի հետ

բանակցութիւններու գլխաւոր հարցը եղած է սահմանին տիրող իրավիճակը:

«Քննարկուել են հակամարտութեան կարգաւորման հեռանկարները, բաց քանի որ հեռանկարները շատ հեռաւոր ապագայի խնդիր են, եւ անհրաժեշտ է դեռեւս լուրջ քայլեր ձեռնարկել, որպէսզի սահմանին լարուածութիւնը թուլանայ, հիմնական շեշտը, բնական է, դրուել է հենց այս խնդրի վրայ: Առանց իրավիճակը կայունացնելու խօսել հակամար-

տութեան կարգաւորման հեռանկարներու մասին, ուղղակի ճիշդ չէ եւ տեղին չէ», - ըսաւ Բաբայեան:

Ըստ պաշտօնական հաղորդագրութեան, Բակո Սահակեան շեշտած է, որ Ատրպէյճանի ակրեւիվ քաղաքականութիւնը եւ զինադադարի ռեժիմի կոպիտ խախտումները կը վտանգեն տարածաշրջանի կայունութեան եւ խաղաղութեան պահպանումը:

Պաշտօնական Ստեփանակեր-

Մար.ը էջ 5

### Տօնական Շքեղ Հանդիսութիւններ՝ Յովնան Արք. Տէրտէրեանի Յօբելիական Չոյգ Տարեդարձներուն Առթիւ



Հիւսիսային Ամերիկայի Արևմտեան թեմի առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի քահանայութեան 35-րդ եւ եպիսկոպոսական ձեռնադրութեան 25-րդ տարեդարձներուն բարեբաստիկ առիթներով, 25 Հոկտեմբերին 2015, Կիրակի օր, տեղի ունեցան տօնական գոյգ միջոցառումներ:

Առաջինը՝ Ս. Դեռնդ առաջնորդանիստ մայր տաճարին մէջ, տեղի ունեցաւ հանդիսաւոր պատարագ: Պատարագիչն էր օրուան յօբելէարը՝ Գերշ. Յովնան Արք. Տէրտէրեան:

Պատարագի կիսուն, յատուկ թափօրով եւ Ուրախ լեր-ի երգեցողութիւնով խորան բարձրացաւ

Ս. Էջմիածնի միաբաններէն Գերշ. Մուշեղ Արք. Պապայեան, ան յատկապէս Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն իր հետ բերած էր Ամենայն Հայոց Հայրապետ Ն.Ս.Օ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի հայրապետական օրհնութեան գիրն ու գնահատականը ուղղուած յօբելէար Յովնան Սրբազանին: Մուշեղ եպիսկոպոսի կողմէ կարգացուած սոյն գնահատականը յոտնկայս ունկնդրուեցաւ եւ արժանացաւ բուռն ծափահարութեանց:

Այնուհետեւ, եկեղեցուց կից Գալայճեան սրահին մէջ, տեղի

Մար.ը էջ 5

### Հալեպահայերը Կ'ահագանգեն Որ Պաշարուած Վիճակի Մէջ Են

Հալեպահայերը կ'ահագանգեն որ մի քանի օրէ ի վեր քաղաքը կը գտնուի պաշարման մէջ: Քաղաքը արտաքին աշխարհին կապող միակ ճանապարհը՝ Խնասերը կը շարունակէ փակ մնալ:

Իշխանութիւնները կը յայտարարեն, որ կառավարական բանակ այս օրերուն կը փորձէ զինեալներու կողմէ ակնապատուած ճանապարհը մաքրել:

«Ազատութիւն» ռատիոկայանի հետ գրոյցի ընթացքին, Հալեպի բնակիչ Մայտա Պաքալեան ըսած է որ, բոլոր ձամբաները գոց են, սակայն թերթերը կը գրեն, որ վաղը պիտի բանան ճամբան: Պէյրութի ճամբան եւ Դամասկոսի ճամբան, որ Հալեպը կը կապեն դուրսի հետ, արդէն երեք օրէ գոց է:

Պատերազմէն քարուքանդ եղած Հալեպի պաշարումէն յետոյ, ըստ տեղաբնակներու, ոչ ջուր կայ, ոչ ալ երեքտրականութիւն: Թէ մէկը, թէ միւրը մատակարարող համակարգերը, ըստ սուրիահայ կնոջ, ընդդիմադիրներու հակառակութեան տակ են: Այս բոլորով հանդերձ, Սուրիահայ համայնքը յոյսեր կը կապէ, որ երկրէն ներս ուսական զօրքերու սկսած գործողութիւններէն յետոյ իրավիճակը կայունանայ:

### Պոլսոյ «Քեմփ Արմէն» Մանկատան Սեփականութեան Վկայականը Յանձնուած է Հայերուն

Թրքական իշխանութիւններուն կողմէ իրուած «Քեմփ Արմէն» անունը կրող մանկատան սեփականութեան վկայականը յանձնուած է իսթանպուլի Կետիկիաշայի հայկական բողոքական եկեղեցիին:

Ինչպէս կը տեղեկացնէ Պոլսոյ մէջ լոյս տեսնող հայկական «Ակօս» թերթը, Կետիկիաշայի հայկական բողոքական եկեղեցուց հիմնադրամի փաստաբանը յայտարարած է, թէ մանկատան շէնքի սեփականութեան վկայականի վերադարձի հետ կապուած բոլոր աշխատանքները աւարտած են եւ շէնքը այժմ կը պատկանի եկեղեցուց:

Յայտնենք որ, իսթանպուլի «Քեմփ Արմէն» մանկատանը 1987-ին գրաւուած էր թրքական իշխանութիւններու կողմէ, այնուհետեւ վաճառուելով թուրք գործարարի մը: Վերջինս ալ որոշած էր քանդել մանկատանը եւ բարձրադարձի ճոխ շէնքեր կառուցել:

Հասարակական ճնշման որպէս արդիւնք, մանկատան քանդումը ժամանակաւորապէս դադարած էր:

Ամիսներ շարունակ մանկատան մօտ հայ երիտասարդներ հերթապահութիւն հաստատած էին քանդումը արգիլելու համար:

**ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԻՍՏԻՏՍՈՒՆ**

# Ալիերը Տագնապի Սեչ Է Հայաստանի Մանդատից

**ՅԱԿՈԲ ԲԱԿԱԼԵԱՆ**

Ատրպեյջանական լրատուամիջոցները յայտնում են, որ այդ երկրի ազգային անվտանգութեան ծառայութիւնը ձեռնարկել է մօտ 4 տասնեակ իսլամիստ ծայրայեղականների: Վերջին շրջանում Ատրպեյջանում տեղի են ունենում ուշագրաւ իրադարձութիւններ՝ պաշտօնանկութիւն եւ ձեռքբերելու թիրախներ ԱԱԾ համակարգում, այժմ իսլամիստ ծայրայեղականների ձեռքբերումը:

Ինչքանով էն այդ զարգացումներն առնչուում ենք ինքնիշխանութիւններին՝ խորհրդարանի Նոյեմբերին կայանալիք ընտրութեանն ընդառաջ, եւ ինչքանով են պայմանաւորուում արտաքին իրողութիւններով:

Հաւանական է նաեւ, որ զարգացումների հետ ընդհանուր առմամբ կապ ունի թէ մէկը, թէ միւսը: Առաւել հաւանական է, որ գերական արտաքին խնդիրներն են, որոնց էլ Ալիերը փորձում է արձագանքել ներսում ինքնիշխան նուազեցնելու համար:

Իհարկէ, այստեղ էլ իրավիճակը միարժէք է: Ալիերը ԱԱԾ եւ իսլամիստական շրջանակներում տոտալ «մաքում» է սկսել՝ վախենալով ընտրական թոհուրէն հում առաքին որեւէ միջամտութիւնից, թէ Ալիերի գործողութիւնները պայմանաւորուած են առաւել լայն տարածաշրջանային համատեքստում նշմարուող բեկումնային փոփոխութիւնների հետ:

Մասնաւորաբար, հետաքրքիր է, որ իսլամիստ ծայրայեղականներին ձեռքբերակալելու մասին տեղեկատուութիւնը գուրդուում է վիեննայում Սիրիայի հարցով ՌԴ-ԱՄՆ եւ նաեւ քառակողմ՝ ՌԴ-ԱՄՆ-Թուրքիա-Սաուդիան Արաբիա ֆորմատի բանակցութիւնների հետ: Ըստ փորձագէտների, այդ բանակցութեանը կարող է դրուել սիրիական հակամարտութեան կարգաւորման գործընթացի մեկնարկ, ժամանակաւոր անցումային կառավարութեան ինքնիշխանութիւնը, Ասատի հեռացման գործընթացի սկիզբ:

Վիեննայի հանդիպումից առաջ Ասատը անակնկալ այցելել էր Մոսկուա, որտեղ էլ արեց ուշագրաւ յայտարարութիւն: Փութինի հետ հանդիպմանը նա ասաց, որ գլխաւորը անհրաժեշտ էր ինքնիշխանութեանը կարգաւորմանը: Ասատը յայտարարեց նաեւ, թէ այդ կարգաւորումը պէտք է լինի ոչ միայն Սիրիայի ղեկավարութեան, այլ ամբողջ ժողովրդի ցանկութեան հիմքով:

Ի դէպ, տեղեկութիւնները յայտնուեցին այն մասին, որ Ասատի հետ Մոսկուա է ժամանել շատ մեծ շքախումբ, որի անդամներին ցոյց են տուել թանկարժէք անշարժ գոյք Մոսկուայում, եւ Ասատը չեւ է մեկնել առանց շքախմբի:

Ատրպեյջանը սիրիական հակամարտութեան պատերազմական փուլի մեկնարկից դիտուում էր որպէս անհրաժեշտ ինքնապաշտպանութիւնները ծաւալուեցին արաբական զարնան ֆոնին, եւ շատ էր խօսուում ու գրուում այն մասին, որ յաջորդ «գարնանային» պետութիւնը կարող է լինել Ատրպեյջանը: Ըստ ամենայնի, Ալիերը նպատակալարմար գտաւ օժանդակել Սիրիայում «գարնան»

երկարաձգմանը, քան թույլ տալ, որ այն հասնի Ատրպեյջան:

Պաքուին այդ մասերի հարցում օգնում էին Թուրքիան եւ բնականաբար Ռուսաստանը: Թէեւ Ատրպեյջանը Ասատի դէմ զինեալներ մատակարարող պետութիւն էր, այդուհանդերձ Ռուսաստանի համար Ատրպեյջանը ունենալով ռազմավարական կարեւորութիւն, օգտուում էր ռազմավարական գործընկերային յարաբերութիւն հաստատելու Մոսկուայի ջանքերից եւ աջակցութիւնից, իսկ Մոսկուան էլ աչք էր փակում Սիրիայի հարցում Ատրպեյջանի դիրքորոշման վրայ:

Ի դէպ, ուշագրաւ է նաեւ, որ իսլամիստների ձեռքբերման տեղեկութիւնը նախորդում է տարածաշրջան ԵԱՀԿ Մինսկի խմբի համաձայնագրաների այցին:

Իսկ այդ խումբը ոչ միայն Արցախի հակամարտութեան կարգաւորման բանակցային ֆորմատ է, այլ մեծ հաշուով միջազգային Անվտանգութեան իւրօրինակ խորհուրդ: Հայաստանի արտգործնախարարի տեղակալ Շաւարշ Քոչարեանը Հոկտեմբերի 23-ին ընդգծել էր այդ հանգամանքը, ասելով, որ Մինսկի խմբի համաձայնագրահոլութիւնը միակ ֆորմատն է, որտեղ բոլոր երեք անդամներն էլ ՄԱԿ անվտանգութեան խորհրդի մշտական անդամ են:

Այդ ֆորմատը քննարկում է աւելին, քան զուտ արցախեան խնդիրը: Ալիերը թերեւս փորձում է պատրաստուել այդ խմբի այցին: Բայց հարց է, թէ Սիրիայի ինքնիշխանութիւնը միակ ֆորմատն է, որտեղ բոլոր երեք անդամներն էլ ՄԱԿ անվտանգութեան խորհրդի մշտական անդամ են:

Այն, որ Ալիերը թէկուզ իրավիճակային կտրուածքով փորձում է «ուղղուել», կամ գոնէ այդպիսի տպաւորութիւն ստեղծել, կարծես թէ նշմարում է նաեւ սահմանին իրավիճակի յարաբերական կայունացումից:

Ամենայնդէպս, յատկանշական է, որ համաձայնագրաների այցից առաջ արտգործնախարարի տեղակալ Շաւարշ Քոչարեանը յայտարարել է, որ բանակցութեան արդիւնաւէտութիւն չի լինի, քանի դեռ Պաքուն չի փոխել իր դեպտրուկտիւ դիրքորոշումը: Քոչարեանը չի շեղուել է Հայաստանի պատերազմի գործառնութիւն մասին, ակնարկելով, որ համաձայնագրաների ֆորմատն այդպիսի գործառնութիւնն է, եւ ըստ երեւոյթի դրա «մանդատ» տրուած է Հայաստանին:

Հայաստանը մի քանի շաբաթ առաջ ցոյց տուեց, թէ ինչպիսի արդիւնաւէտութեամբ է կիրառում այդ մանդատը: Միւս կողմից, սակայն, Հայաստանը բացարձակ անարդիւնաւէտ է կիրառում իր արտաքին քաղաքական սուբիէկտութեան այսպէս ասած բնական մանդատը, որ ունի որպէս միջազգային իրաւունքի ինքնուրոյն սուբիէկտ: Այդ իմաստով, Հայաստանը պատժում է Ալիերին, բայց հարց է Հայաստանի անելիքը այն դէպքում, երբ այլեւս չլինի պատժելու անհրաժեշտութիւն: Տարածաշրջանային իրավիճակի լայնածաւալ փո-

# Անբարոյականութեան Խրախճանքը

Նախկին արտգործնախարար Վարդան Օսկանեանը հանդէս է եկել սահմանադրական փոփոխութիւնները քննադատող հերթական գրառմամբ: Նա իրեն բնորոշ կորեկտ ոճով ներկայացրել է սահմանադրական փոփոխութիւնների վտանգները, արձանագրել է, որ դրանց արդիւնքում Հայաստանն իրականում անցում է կատարելու ոչ թէ՛ խորհրդարանական, այլ՝ միակուսակցական, մենաշնորհային կառավարման համակարգի: Նախկինում եւս Վարդան Օսկանեանը հանդէս է եկել սահմանադրական փոփոխութիւնները քննադատող, ի դէպ, բաւական հիմնաւոր հրապարակումներով: Խնդիրը, սակայն, Օսկանեանի գնահատականների փաստարկուածութիւնը է, այլ գտնուում է բոլորովին այլ հարթութիւնում, որը պայմանականորէն կարելի է անուանել բարոյականութիւն: Իսկ երբ խօսքը քաղաքականութեան ու քաղաքական գործիչների մասին է, երեւոյթն այդ կողմում է քաղաքական բարոյականութիւն:

Ու այդ հարթութիւնում հնչող առաջին հարցն այն է՝ արդեօք Վարդան Օսկանեանը բարոյական իրաւունք ունի քննադատելու սահմանադրական փոփոխութիւնները եւ հանդէս գալու այնքան ճերմակ ձեռնոցներով, որքան երեւում են նրա սոցցանցային գրառումներից: Նա խօսում է այնպիսի բարձր դիրքերից, իր գնահատականներում շօշափում է այնպիսի վեհ կատեգորիաներ, որ տպաւորութիւն է ստեղծուում, թէ ընթացում էս ոչ թէ՛ 10 տարի Ռոբերտ Քոչարեանի օրօք ԱԳ Նախարարի պաշտօնը զբաղեցրած, նոյնքան տարի աշխարհի առաջ Հայաստանում մարդու իրաւունքների ոտնահարումը, ժողովրդավարական ազատութիւնների բռնաբարոյութիւնը 2008թ. Մարտի 1-ի սպանութիւնների համար անձամբ գաղափարափրկիտիպական հիմնաւորումներ ներկայացրած պաշտօնեայի գրառումը, այլ Դաւիթ Լամայի մենագրութիւնն ազնուութեան ու արդարամտութեան մասին:

Բայց Օսկանեանը միակ գործիչը չէ, ում յիշողութիւնը, մեղմ ասած, բարձր մակարդակի վրայ չէ: Վերջին հաշուով, յիշողութիւնը «փիւս խստեաթ» ունի՝ դաւաճանում է: Բայց գոնէ ժամանակակից դարում յիշեցումի տասնեակ, հարիւրաւոր գործիքներ կան, ու ժամանակ առ ժամանակ, թերեւս, պէտք է յիշեցնել մարդկանց, որ գնահատականներ հնչեցնելուց առաջ արժէ թերթել սեփական կենսագրութիւնը: Այո՛, Օսկանեանը

փոխութեան համատեքստում լոկ Ատրպեյջանին պատժելը Հայաստանի համար բաւական սահմանափակ ղերակատարում է թէ՛ ժամանակի, թէ՛ տարածութեան իմաստով:

Նոր իրավիճակը Հայաստանից պահանջում է առաւել լայն յանձնառութիւն, բովանդակային, քաղաքակրթական նոր միջազգային յայտ: Բայց դրա փոխարէն Հայաստանը արդէն տեւական ժամանակ եօթ երգ գիտէ, եօթն էլ ԵՏՄ-ի մասին:

«ԼՐԱԳԻՐ»

նր միակը չէ: Նոյն պատկերն է, ըստ էութեան, բոլոր նախկին պաշտօնեաների պարագայում: Նրանց թուում է, որ մարդկանց չիշողութիւնն այնքան կարճ է, որքան իրենց պաշտօնավարման տարիներին պետութեան համար արուած դրական գործերի ցուցակը: Մինչդեռ այս եւ բազմաթիւ այլ պաշտօնեաների ամենաարժէքաւոր յայտարարութիւնը պէտք է լինէր լուրթիւնը: Կարելի է վատահարասել, որ հայ հասարակութիւնը նոյն պատկերին ակնատես է լինելու նաեւ 5, 10 տարի անց, երբ այսօրուայ իշխանութիւնները դառնան նախկին պաշտօնեաներ ու սկսեն «մաքագործուածի» դիրքերից քննադատել ապագայ իշխանութիւններին:

Առհասարակ, Հայաստանի ամենամեծ խնդիրը ոչ թէ՛ նիւթական ռեսուրսների, օգտակար հանածոների, այլ՝ քաղաքական բարոյականութեան կորուստն է: Հայաստանում գոյութիւն չունի ո՛չ բարոյական քաղաքականութիւն, ո՛չ էլ քաղաքականութեան բարոյականութիւն: Հայաստանը դարձել է մի տիրոջ, որտեղ յաղթում է ստորը, քծնողը, դաւաճանն ու երկրեսանին:

Նիւթական, առարկայական հարիւրաւոր խնդիրների առկայութեան պայմաններում այս մասին խօսելը կարող է անտեղի թուալ, բայց իրականում սա ամենախորքային խնդիրն է, որը ժամանակի ու տարածութեան մէջ մաշելու է պետութիւնն ու պետականութիւնը: Որովհետեւ առանց մարդու չի կարող լինել պետութիւն: Իսկ առանց բարոյականութեան չի կարող լինել մարդ, ոեւէ պարագայում:

« 168 ԺԱՄ »

**ՄԱՍԻՍ**  
ՇԱԲԱԿԱՅԻՆ

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԿԱՅԻՆ**  
ՊԱՇՏՏՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈՒԿՐԱՏ ՀՆԱՍԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Մրջանի

ԽՍԲԱԳԻՐ՝  
SOPEB. ՄՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
MASSIS WEEKLY

Հրատարակելով հայաստանեան մամուլին մեջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» ամսալսմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը

### ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## «Նոյնականացման Քարտով Քուեարկելու Հնարաւորութիւնը Կեղծման Համար է» Կարծում են Ընդդիմադիրները

Ընդդիմութեան ներկայացուցիչները պնդում են, Հայաստանի աւելի քան կէս միլիոն քաղաքացիների նոյնականացման քարտերով (ինքնութեան քարտ խ.) հանրաքուէին մասնակցելու իրաւունք տալով, իշխանութիւնները կրկնակի քուէարկութեան, հետեւաբար եւ՝ սահմանադրական փոփոխութիւնների հանրաքուէն կեղծելու հնարաւորութիւն են ստեղծում:

Ի տարբերութիւն անձնագրով քուէարկելու դէպքի, նոյնականացման քարտով ընտրութիւններին մասնակցող քաղաքացիների քուէարկութեան մասին վկայող որեւէ գրոշմակնիք չի գրուել: Կենտրոնական ընտրական յանձնաժողովի նախկին անդամ Ջոյա Թադեւոսեանն ու «Ժառանգութիւն» կուսակցութեան փոխնախագահ Արմէն Մարտիրոսեանը «Ազատութեան» հետ գրոյցում նշեցին, թէ իշխանութեան նպատակն այս պարագայում

աւելի քան ակնյայտ է:

Արմէն Մարտիրոսեանը ասում է. «Սա ընտրակեղծիքներ կատարելու եղանակներից մէկն է ապահովելու, որովհետեւ ակնյայտ է, որ դա հնարաւորութիւն է ընձեռելու բազմակի քուէարկութիւն իրականացնել»: Ջոյա Թադեւոսեանի համաձայն, այդ որոշումը հետապնդում է ընտրակեղծիքներ իրականացնելու նպատակ:

Աժ-ի պետաիրաւական հարցերի մշտական յանձնաժողովի հեղինակած օրինագիծը առաջարկում է ընտրելու իրաւունք տալ նաեւ նոյնականացման քարտերով: Յանձնաժողովը մերժեց նիստին ներկայ ընդդիմադիր պատգամաւորներին՝ քարտով քուէարկելու վերահսկման մեխանիզմներ ներդնելու առաջարկը, պատճառաբանելով, որ հիմա դա անելը հնարաւոր է, քանի որ հանրաքուէին շատ քիչ ժամանակ է մնացել:

## Անհնազանդութեան Կոչերի Հեղինակները Պէտք է Արժանացան Համապատասխան Վերաբերմունքի».

«Նման տիպի մարդկանց հարկաւոր է համապատասխան վերաբերմունք՝ օրէնքի սահմաններում: Ի՞նչ է, իրաւապահները ձեռքերը ծալած պէտք է նստեն, որ մարդկանց անհնազանդութեան կոչեր անեն եւ քաշքշուկներ սկսուի սեփական ժողովրդի հետ: Դա թոյլ չենք տալու», - ասում է ՀՀԿ խմբակցութեան ղեկավար Վահրամ Բաղդասարեանը:

«Նոր Հայաստան» ընդդիմադիր շտաբը յայտարարել էր, որ Դեկտեմբերի մէկից դուրս են գալու փողոց՝ իշխանափոխութեամբ կանխելու սահմանադրական հանրաքուէն: «Ժառանգութիւնում» ու «Հիմնադիր խորհրդարանում» անհնար են համարում Սերժ Սարգսեանին ընտրութիւններով հեռացնելը:

«Դա սպասելի էր, որովհետեւ նրանք որեւէ հիմնաւորում չունեն սահմանադրական բարեփոխումներին իրենց «ոչ»-ը ասելու, եւ նրանք մի երգ ունեն՝ պէտք է նման սադրիչ գործողութիւններով, անհնազանդութեան կոչերով ցանկանան ներքաղաքական իրավիճակի մէջ լարում մտցնեն, որ կարողանան ինչ-որ ձեւով այդ առիթներից օգտուել», - ասում է Վահրամ Բաղդասարեանը:

Ժիրայր Սեֆիրեանի եւ ընկերների դէմ շարունակւած գործը՝ գանգոյաւորներին անկարգութիւններ նախապատրաստելու յատկանիշներով, կարճուած է: Ընդդիմադիր գործիչները մեղադրելի կարգավիճակում են: «100-ամեակն առանց ուժիմի» կարգախօսով



ՀՀԿ խմբակցութեան ղեկավար Վահրամ Բաղդասարեան

շուրջ տարեայ հանրահաւաքները պէտք է մեկնարկէին այս տարուայ Ապրիլի 24-ին, շարժման առաջնորդները, սակայն, հանրահաւաքից մէկ ամիս առաջ կաշնաւորուեցին: Վահրամ Բաղդասարեանն ասում է՝ ամէն ինչ օրէնքի շրջանակում է եղել եւ հիմա էլ թոյլ չեն տալու, որ սադրիչները խանդարեն հանրաքուէի անցկացմանը:

«Իսկ դուք դիտէ՞ք, թէ ինչ գնահատական են տալիս այն մարդկանց, որոնք քայքայում են իրենց երկրի ներքաղաքական իրավիճակը եւ առաւել եւս՝ որոնք ինֆորմացիա են տալիս մեր ոչ բարեկամ երկրներին: Նման կոչերը, որ ցանկանում են վարկաբեկել միջազգային արեւաշուք մեր երկրի վարկանիշը, եւ գնահատականներ դրան չեն կարող տալ: Ինձ թւում է՝ դրա գնահատականները կը տայ հանրութիւնը», - ասում է ՀՀԿ խմբակցութեան ղեկավարը:

## «Երկրում Արդարութեան ճգնաժամն Աղքատութիւնից Սուր է Ձգացում».

Ներկայիս Հայաստանում յատկապէս սուր է արդարութեան ճգնաժամը: Այս մասին Հոկտեմբերի 27-ին ՀՀ խորհրդարանում ասել է ԲՀԿ առաջնորդ, նրա խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Նաիրա Ջոհրաբեանը՝ անդրադառնալով օմբուդսմենի 2014թ. գեկոյցին: Նրա խօսքով՝ հանրապետութիւնում արդարութեան ճգնաժամ է նկատուում, որը երկիրը դեռ եւս չի կարողանում չաղթահարել: «Մեր երկրում, համաձայն պաշտօնական վիճակագրութեան, որին ես չեմ հաւատում, աղքատութեան մակարդակը ընդամէնը 36 տոկոս է: Սակայն իրականութիւնը շատ հեռու է այդ թուից: Իսկ բոլոր հարցումները վկայում են, որ անգամ այդ 36 տոկոսի գլխաւոր խնդիրը սեփական ծանր սոցիալական պայմանները չեն, այլ արդարութեան դեֆիցիտը», - ասել է Ջոհրաբեանը:

## «Եթէ Ժողովուրդը Որոշել է, Որ Պէտք է Կործանուի, Դա Իր Գործն է»

Դեկտեմբերի 6-ին տեղի կունենայ սահմանադրական փոփոխութիւնների հանրաքուէն: Իսկ թէ ինչպիսին կը լինի արդիւնքը քաղաքագէտ Լեւոն Շիրինեանի համոզմամբ՝ ամէն ինչ կախուած է ժողովրդից: Քաղաքագէտը «Ա1+»-ի հետ գրոյցում այդ կապակցութեամբ գաւելուով շեշտում է. «Ժողովուրդը ինչպարուած սպասում է պաշտօնատեղանակ հանրապետութեան անցնելու ձեւին, բոլորը պատրաստ են դրան, ընդդիմութիւնը՝ եւս: Ընդդիմութիւնը՝ ԲՀԿ-ի հետ միասին, որը ֆիզիկապէս հայտնում էր իշխանութիւններին, հիմա պայանաւորւած լծուել է գործի: Նրանք մտածում են, որ պէտք է մնան քաղաքականութեան մէջ, թող Սահմանադրութիւնը փոխուի, հէրն էլ անիծած, իսկ մնացեալ ուժերն ինչքանով կը կարողանան ժողովրդին մոբիլիզացնել՝ ժամանակը ցոյց կը տայ»:

Ըստ քաղաքագէտի՝ հասարակութիւնը սպասուող գործընթացի վերաբերեալ իր կարծիքը կը սկսի արտայայտել Դեկտեմբերի 5-ից, իսկ որ ժողովուրդը ոտքի կը կանգնի ընդդէմ այդ փոփոխութիւնների՝ քաղաքագէտը կասկած չունի:

«Ինքնիշխանը, սուվերենը ժողովուրդն է եւ ժողովրդի կամքն է գերազոյն կամքը: Եթէ ոտքի կանգնեն, ապա իշխանու-



Քաղաքագէտ Լեւոն Շիրինեան

թիւնը ոչ մի բան էլ չի կարողանայ անել, միայն թէ այդ ժողովուրդը պէտք է հասկանայ, գիտակցի իր շահը», - ասաց նա:

Մեր այն հարցին, թէ ներքին եւ արտաքին մարտահրաւէրները հաշուի առնելով՝ Հայաստանի համար որքանով է ընդունելի առաջարկուող խորհրդարանական կառավարման մոդելը, պարոն Շիրինեանը պատասխանեց. «Եթէ ժողովուրդը քուէարկեց, ապա ընդունելի է, աշխարհի բոլորը երկրներում էլ այդպէս է: Հիմա, պարզապէս, խնդիրը կայանում է նրանում, որ հանրաքուէն կայանայ: Ժողովուրդը պէտք է գնա քուէատուփի մօտ, եթէ որոշել է, որ պէտք է կործանուի, դա իր գործն է, ժողովրդի քուէարկութիւնից յետոյ բազար չի արւում»:

## Արա Աբրահամեանից Առաջ Նոյն Առաջարկն Արուել է Սամուել Կարապետեանին ու Ռոբերդ Քոչարեանին

«Հրապարակ» թերթը գրում է. «Ըստ լաւատեղեակ աղբիւրների, Գագիկ Ծառուկեանի՝ քաղաքականութիւնից դուրս գալուց յետոյ Ռուսաստանում համապատասխան շահագրգիռ «կենտրոնները» կանչել են «Տաշիր գրուպի» սեփականատէր Սամուել Կարապետեանին, առաջարկել ակտիւանալ Հայաստանեան քաղաքական դաշտում եւ ստեղծել նոր կուսակցութիւն: Վերջինս չի համաձայնել: Յաջորդ առաջարկն արել են Ռոբերդ Քոչարեանին: Նա նոյնպէս վերջիններին մերժել է՝ երկու պատճառով, առաջարկել է հասնել նրան, որ Հայաստանում սահմանադրութիւնը չփոխուի, ապա եւ ասել է, որ ինքը նոր կուսակցութիւն

այս պայմաններում չի ստեղծի:

Ընտրութիւնը կանգ է առել Արա Աբրահամեանի վրայ: Վերջինս համաձայնել է: Դա է եղել պատճառը, որ սահմանադրական փոփոխութիւնների առաջին տարբերակում՝ ապագայ վարչապետի համար ամրագրուած Հայաստանում ապրելու 7 տարուայ ցենզը վերջնական տարբերակում հանուել է եւ հանուել է Ռուսաստանի առաջարկով:

Ի դէպ, մեր աղբիւրների փոխանցմամբ, այդ դէպքում եւս Արա-յի համար հարցը փակուելու է «չորով», նպատակ կայ այդ խնդիրը «կարգաւորել» օրենսդրութեան եւ թոյլ չտալ, որ Արան մտնի «մեծ» քաղաքականութիւն»:

## Հերթական Թէժ Մարտը Իւղոս Պաշտօնի Համար

«Հայկական Ժամանակ» թերթը գրում է. «Հերթական մարտն է բռնկուել իշխանութեան խոհանոցում: Այս անգամ մարտնչող կողմերն են ՀՀ նախկին վարչապետ, ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Տիգրան Սարգսեանը, ՀՅԴ-ն եւ Աժ ՀՀԿ խմբակցութեան պատգամաւոր Խոսրով Յարութիւնեանը:

տարեվերջ պէտք է ձեւաւորուի ԵՏՄ տնտեսական նոր, 10 հոգանոց յանձնաժողով, որտեղ ԵՏՄ անդամ իւրաքանչիւր երկիր պէտք է ունենայ երկու անդամ: Այս պահին ՀՀ-ն ԵՏՄ-ում ունի 3 նախարար՝ Խոսրով Յարութիւնեանի որդին, Արա Նուանեանը եւ էկոնոմիկայի նախկին փոխնախարար Կարինէ Մինասեանը, որը վաչելում է Տիգրան Սարգսեանի հովանաւորութիւնը: Վերջինս, չի շեցնեք, եկող տարուայ փետրուարից պէտք է զբաղեցնի ԵՏՄ գործադիր մարմնի՝ Եւրասիական տնտեսական յանձնաժողովի նախագահի պաշտօնը:

Մեր տեղեկութիւններով, Խոսրով Յարութիւնեանի որդին՝ Ռոբերդ Յարութիւնեանը, ինչպէս նաեւ ՀՅԴ-ական նախկին պատգամաւոր Արա Նուանեանը, որոնք ԵՏՄ կողմնակից անդամ նախարար են այս տարուայ Յունուարից եւ ստանում են ամսական 12 հազար դոլար աշխատավարձ, առաջիկայում թերեւս հրաժեշտ կը տան իրենց պաշտօններին: Բանն այն է, որ մինչեւ այս

Այսինքն, 4-ից 2-ը պիտի մնան: Թէժ մարտը շարունակուում է. ՀՅԴ-ն ու Յարութիւնեանն էլ իրենց հերթին յոյսերը չեն կորցրել»:

# ԼՈՒՐԵՐ

## «Իսլամական Պետութիւնը Հայաստանին Ուղղակի Վտանգ Չի Սպառնում»

Ինչո՞ւ հենց հիմա ՌԴ-ն որոշեց ներգրաւուել սիրիական հակամարտութեանը ու ի՞նչ փոխեց նրա ներգրաւուածութիւնը: Լրագրողները հետ հանդիպմանն արաբագէտ Արմէն Պետրոսեանը դա պայմանաւորեց երկու գործօնով՝ ներսիրիական եւ արտասիրիական. «Վերջին մի քանի ամիսների ընթացքում Բաշար Ասադը զիջել է իր դիրքերը: Դա մտահոգել է նրա դաշնակից ՌԴ-ին, քանի որ ութրաինական ճգնաժամը հանգուցալուծման շեմին է, ու կրեմլի դիրքերն այնքան էլ ուժեղ չեն այստեղ: Սեփական հանրութեան ու դրսի ուժերի հնարաւոր անդրադարձը մեղմելու կամ շրջանցելու համար ՌԴ-ն միանգամից մտաւ Սիրիա»:



Արաբագէտ Արմէն Պետրոսեան

ուած այդ կոնտեքստում: Արաբագէտի վստահեցմամբ՝ ՀՀ-ն ուղղակի վտանգ չի սպառնում, քանի որ ՌԴ-ն իրենց գործողութիւնները կարող է իրականացնել միայն իր շարքերում գործող մուսուլման համակիրների միջոցով. «Իսկ ՀՀ-ում չկայ մուսուլման բնակչութիւն, կամ հակառակը՝ հայեր իսլամական զինեակների շարքերում չկան»:

Արդեօք այդ ֆոնին միտումնաւոր էր թուրքական մարտական երկու ուղղութիւնի՝ ՀՀ սահմանի հատման դէպքը, Արմէն Պետրոսեանը չի ժխտում, որ գուցէ քաղաքական առումով թուրքիան փորձի ի հակակշիռ ՌԴ գործողութիւնների որոշակի քայլեր իրականացնել այն շրջաններում, որտեղ ամուր են ՌԴ դիրքերը կամ համարում են ՌԴ ազդեցութեան գոտի. «Սակայն չեմ կարծում, որ թուրքական այդ ուղղութիւնների՝ ՀՀ սահմանը հատելը, նպատակ ունի հրահրել ինչ-որ գործողութիւններ: Ես աւելի հակուած եմ հաւատալ պաշտօնական Անգարայի պատճառաբանութեանը, որ դա պայմանաւորուած է եղել եղանակային վատ պայմաններով»:

Ըստ արաբագէտի՝ ՌԴ-ի ներգրաւուածութիւնը զգալիօրէն թուլացնում է թուրքիայի դիրքերը Սիրիայում. «ՀՀ ռազմավարական դաշնակից ՌԴ ներգրաւուածութիւնը լուրջ խնդիրներ է առաջացնում թուրքիայի համար: Այստեղ կարեւոր է նաեւ սիրիահայերի խնդիրը, որոնց հիմնական մասը շարունակում է բնակուել Հիւսիսային շրջաններում՝ Լաթաքիայի հիւսիսում, Հայկազում, որտեղ իրավիճակը թէժ է: Պէտք է քաղաքական որեւէ ձեւաչափ ձեւաւորուի, որպէսզի բոլոր ուժերը ընդհանուր յայտարարի գան՝ հակամարտութեան հանգուցալուծման համար: Զարգացումները շատ մշուշուած են ու ամէն ինչ կախուած է իրավիճակային զարգացումներից»:

### Պարոն Պետրոսեանի խօսքերով՝ «Իսլամական պետութիւն» կազմաւորումը հակամարտութեան գոտում մինչեւ ՌԴ ներգրաւուածութիւնն արդէն պատերազմ էր յայտարարել մեր տարածաշրջանին: Իսկ որքանով է ՀՀ-ն վտանգ-


րին, պէտք է առաջին հերթին գումար տալ, որ հիմնադրամը կարողանայ օգնել»,- ասաց նա: Մոսկուայի «Արարատ Հայթ» հիւրանոցում ամէն տարի անցկացնող «Հայաստան» համահայկական հիմնադրամի ճաշկերուցի- դրամահաւաքի մասին Վարդանեան տեղեկացուց, որ, Այս պահի դրութեամբ որոշումն այն է որ ճաշկերուցի որպէս այդպիսին չի կայանալու, եթէ ինչ-որ բան փոխուի, մենք նախօրոք կը յայտարարենք: Իսկ որոշումը կայացուել է այն պատճառով, որ Ռուսաստանում տնտեսական ճգնաժամը դեռեւս չաղթահարուած չէ եւ մեր հայրենակիցները բազմաթիւ խնդիրներ ունեն իրենց անձնական բիզնեսների հետ կապուած:

### Թուրքիա Այցելող Հայաստանցիների Թիւր Խիստ Նուազել է

Թուրքիա այցելող հայաստանցիների թիւը 2015-ի Յունուարից Օգոստոս ամիսներին կազմել է 33,708 հոգի: Ինչպէս NEWS.am-ը տեղեկանում է թուրքիայի մշակուցի եւ տուրիզմի նախարարութիւնից, 2015-ի Օգոստոսին թուրքիա է այցելել 8,170 հայաստանցի, ինչը 26 տոկոսով պակաս է նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածի համեմատ: Նախորդ տարի Յունուարին թուրքիա էր այցելել 6, 424 հայաստանցի: Իսկ 2015-ի Յունուարից Օգոստոս ամիսներին թուրքիա այցելած հայաստանցիների թիւը նախորդ տարուայ համեմատ նուազել է 29 տոկոսով՝ կազմելով 33,708 հոգի: Նախորդ տարի նոյն ժամանակահատուածում թուրքիա էր այցելել 47,591 հայաստանցի:

## Ճորճ Քլունի. «Հայոց Ցեղասպանութիւնը Իրականացուել է 1915-ին, Ոչ Որ Չի Վիճում»

1915-ին հայերի նկատմամբ ցեղասպանութիւն է կատարուել, այդ հարցի վերաբերեալ ոչ ոք չի վիճում: Այդ մասին ասել է համաշխարհային հռչակ վայելող դերասան Ճորճ Քլունին Հարաւային Քալիֆորնիայի հանրային ռադիոյի «The Frame» հաղորդմանը տուած հարցազրոյցում:



Հռչակաւոր դերասան Ճորճ Քլուն

«Հիմա պատմութիւնը փոխուել է, եւ թուրքերն այլեւս չեն ուզում խօսել դրա մասին: Եւ քանի որ մենք թուրքիայում ռազմական բազաներ ունենք, յանկարծ այդ նոյն քաղաքական գործիչները, որոնք մինչ այդ ասում էին՝ «Այո, եղել է ցեղասպանութիւն», այսօր չեն կարող խօսել դրա մասին: Դուք դա չէք կարող ցեղասպանութիւն կոչել»,- յայտնել է Քլունին:

Դերասանի խօսքով, ինքը շատ սենսատորների հետ է խօսել եւ հարցրել է, թէ կարո՞ղ են այսօր խօսել Հայոց ցեղասպանութեան մասին: Օրէնսդիրները պատասխանել են. «Բոլորովին չենք կա-

### Բրեդլի Բուզետ. «Հայաստանից Արտագաղթում Են, Քանի Որ Ապագայի Հեռանկարներ Չեն Տեսնում

Արտագաղթը լուրջ խնդիր է եւ կարեւոր է, որ Հայաստանի իշխանութիւնները լուծեն այդ հարցը, «Ազատութիւն» ռատիոկայանի «Կիրակնօրեայ վերլուծական Թամրազեանի հետ» հաղորդման եթերում յայտարարեց Հայաստանում ՄԱԿ-ի գրասենեակի ղեկավար Բրեդլի Բուզետոն:

զարգացման համար: Մենք իշխանութիւնների եւ մեր գործընկերների հետ աշխատանքներ ենք տանում այս ուղղութեամբ»:

Միգրացիայի համատեքստում Բրեդլի Բուզետոն կարեւոր համարեց յիշատակել ներգաղթողներին, նշելով, որ բացի հայաստանցիներից, ովքեր ժամանակին հեռացել են եւ այժմ վերադառնում են, կան նաեւ շուրջ 17,000 սիրիահայեր, ովքեր եկել են Հայաստան:

«Արտագաղթը իրական խնդիր է Հայաստանում: Հայաստանը միակ երկիրը չէ, որ նման խնդրի առաջ է կանգնած: Այս տարածաշրջանի այլ երկրներ նոյնպէս այս խնդիրն ունեն: Եւ անկեղծ ասած, սա այս խնդիրը միայն տնտեսութեամբ չի պայմանաւորուած: Այդ մարդիկ իրենց հասարակութեան մաս չեն զգում, նրանք իրենց ապագայի հեռանկարներ չեն տեսնում: Դա, ինչ-որ առումով, աւելի խորը խնդիր է», - նշեց Բուզետոն՝ յաւելելով. - «Սա բարդ խնդիր է եւ կարծում եմ մենք պէտք է հարցի լուծմանը մտենանք տարբեր կողմերից, պէտք է պայմաններ ստեղծուել ոչ միայն տնտեսութեան զարգացման, այլ նաեւ սոցիալական

«ՄԱԿ-ը մեծ աջակցութիւն է ցուցաբերել նրանց, իհարկէ՝ Հայաստանի իշխանութիւններին տրուող աջակցութեան տեսքով: Այդ աջակցութիւնը ներառում է ծածկ՝ բնակարանային վարձի փոխհատուցումներ, մասնագիտական վերապատրաստում եւ այլն: Թէեւ հետագոտութիւններ չեն արուել, սակայն կարող եմ ասել, որ ինչ-որ առումով սիրիահայերի ներգաղթը խթանել է տնտեսութիւնը եւ ձեռնարկատիրական ոգին», - նշեց ՄԱԿ-ի հայաստանեան գրասենեակի ղեկավարը:

### Դինքի Սպանութեան Գործով Երկու Ոստիկանայետի Համար Դատախազը Ցմահ Ազատագրկում է Պահանջել

Ստամբուլի հայկական «Ալօս» շաբաթաթերթի նախկին խմբագիր Հրանդ Դինքի սպանութեան գործով դատախազը 2 ոստիկանայետի համար ցմահ ազատագրկում է պահանջել:

բարձրաստիճան ոստիկանների հանդէպ ներկայացուած մեղադրական եզրակացութիւնները:

Մեղադրական եզրակացութեան մէջ «դիտաւորեալ սպանութեան» մեղադրանքով ցմահ ազատագրկում է պահանջուել ոստիկանութեան հետախուզութեան վարչութեան նախկին պետ Ռամազան Աքիւրեքի եւ հետախուզութեան նահանգային վարչութեան նախկին պետ Ալի Ֆուաթ Յըլմազերի համար:

Այս գործը հետաքննող դատախազը ցմահ ազատագրկում է պահանջել մասնաւորապէս, ոստիկանութեան հետախուզութեան վարչութեան նախկին պետ Ռամազան Աքիւրեքի եւ հետախուզութեան նահանգային վարչութեան նախկին պետ Ալի Ֆուաթ Յըլմազերի համար:

Ստամբուլի ոստիկանութեան նահանգային վարչութեան նախկին պետ Ջելալեթին Ջերահի եւ ոստիկանութեան հետախուզութեան վարչութեան նախկին պետ Սաբրի Ուզունի համար պահանջուել է 6 տարուայ ազատագրկում՝ «պաշտօնի չարաշահման» մեղադրանքով:

### ԸՆԿ. ՅԱԿՈՒ ՏԻԳՐԱՆԵԱՆ ԴԱՄԱՍԿՈՍԵՆ «ԹՈՒՐԲԻԱՆ ԽԱՆԳԱՐՈՂ ՏԱՐՐ ԵՒ ԴԱԲԵՐ ՆԻԲՈՂ ԵՐԿԻՐ Է»



Հակառակ աւելի քան չորս ու կէս տարի առաջ սկսած պատերազմին, Սուրիոյ մայրաքաղաքին մէջ տիրող զգուշաւոր վիճակին եւ հայաշատ թաղամասերուն վրայ մերթ րնդ մերթ պայթող ուռմբերուն, Իսլամական հայ գաղութը կիրակի 25 Հոկտեմբեր 2015-ին ոգեկոչեց Հնչակեան Քսան կախաղաններու նահատակութեան հարիւրամեակը: Այս առթիւ յատուկ այցելութեամբ Դամասկոս ժամանած էր Սոցիալ Դեմոկրատ Հրնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան ատենապետ Ընկ. Յակոբ Տիգրանեան: Վերջինս, Կեդրոնական Վարչութեան Դամասկոսահայ անդամ Ընկ. Շաւարշ Ակիւնեանի ընկերակցութեամբ կիրակի առաւօտեան ներկայ գտնուեցաւ Քսան կախաղաններու յիշատակին նուիրուած հոգեհանգստեան արարողութեան, որ տեղի ունեցաւ Սուրբ Սարգիս եկեղեցու մէջ, յաւարտ սուրբ պատարագի, հանդիսապետութեամբ Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Արմաշ Եպս. Նալպանտեանի: Ապա, եկեղեցու շրջափակին մէջ, նահատակաց յուշակոթողին շուրջ տեղի ունեցաւ ծաղկեպսակի գեւեղում՝ ձեռնամբ Ընկ. Տիգրանեանի եւ Ընկ.Ակիւնեանի, ընկերակցութեամբ ՀՄՄ-ի Դամասկոսի փողերախումբին:

Իսկ կիրակի երեկոյեան, Դամասկոսի հայ կաթողիկէ «Ամինեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Հնչակեան Քսան կախաղաններու նահատակութեան հարիւրամեակին նուիրուած ոգեկոչման հանդիսութիւն, ներկայութեամբ առաջնորդ սրբազանին, Դամասկոսի մօտ

Հայաստանի դեսպանին, Դամասկոսահայ գաղութի ազգային եւ կրօնական ներկայացուցիչներուն, ինչպէս նաեւ հայորդիներու բազմութեան:

Հանդիսութեան ընթացքին խօսքեր արտասանեցին Կեդրոնական Վարչութեան անդամ Ընկ. Շաւարշ Ակիւնեան, Դամասկոսի մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Դոկտ. Արշակ Փոլատեան եւ Կեդրոնական Վարչութեան ատենապետ Ընկ. Յակոբ Տիգրանեան: Վերջինս իր խօսքին մէջ անդրադարձաւ դարերու ընթացքին թուրքիոյ եւ անոր նախորդած Օսմանեան Կայսրութեան շրջանային ժխտական դերակատարութեան եւ դատապարտելի դերակատարութեան: «Ջարմանայի է, որ հակառակ երկար տարիներու ընթացքին տեղի ունեցած փոփոխութիւններուն եւ պատմութեան տուած դասերուն, թուրքիա կը շարունակէ հանդէս գալ իբրեւ հարեւան երկիրները խանգարող տարր եւ դաւեր նիւթող երկիր», ըսաւ Ընկ. Տիգրանեան: Ան դիտել տուաւ, որ թուրքիոյ «գէրօ խնդիրներ հարեւաններուն հետ» քաղաքականութիւնը մէկ գիշերուան ընթացքին ջնջուեցաւ եւ Անգարա մտաւ տիրահազակ խաղի մը մէջ:

Հանդիսութիւնը եզրափակուեցաւ Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Արմաշ Եպս. Նալպանտեանի «Պահպանիչով»:

Ընկ. Յակոբ Տիգրանեանի գլխաւորած պատուիրակութիւնը այցելեց ազգային առաջնորդարան եւ Հայաստանի դեսպանատուն, ուր սրբազան հօր եւ Հայաստանի դեսպանին հետ քննարկեց գաղութի ընդհանուր վիճակը:

### ԹՈՒՐԲ ՊԱՏՄԱԲԱՆ ՌԻՄԻԹ ՔՈՒՐԹԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ ՔՈՒՐԴ ՍՊԱՅԻ՝ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՏԱՐԻՆԵՐՈՒՆ ՅԱՅԵՐՈՒՆ ՓՐԿԵԼՈՒ ՋԱՆՔԵՐՈՒ ՄԱՍԻՆ ՊԱՏՍՈՂ ԳԻՐՔԸ

Նոյեմբերի 6-ին ԱՄՆ Քլարքի համալսարանի ազգութեամբ թուրք պատմաբան Ումիթ Քուրթը Ֆրեզնոյի համալսարանին մէջ կը ներկայացնէ Քրդական Շինդլեր. «Փրկչի մը պատմութիւն» գիրքը, կը հաղորդէ Massis Post-ը: Դասախօսութիւնը 2015-ի հայագիտական աշխատանքի ծրագրի դասախօսութիւններու շարքի մաս կը կազմէ:

Ըստ գրքի բովանդակութեան, ձեմիլ Կունէի Օսմանեան բանակի լեյտենանտ էր եւ 1915-ին նշանակուած էր Պիրեճիկի նաւաշինական գործարանի տնօրէն՝ Օսմանեան հինգերորդ բանակի վերահսկողութեան ներքեւ, որու հրամանատարը ձեմալ փաշան էր: Նաւաշինական գործարանին մէջ լաստանաւեր կը կառուցուէին, որոնք կ'օգտագործէին օսմանեան զինուորներու կողմէ եփրատ գետը անցնելու համար:

Պատմականօրէն Կունէին առանցքային դարձնող փաստը անոր՝ հայերուն փրկելու անդադար ջանքերն են: 1915-1917 թուականներուն ան յատկապէս կը փորձէ օգնել Այնթապի բողոքական հայերուն, որպէսզի կանխէ դէպի Տէր Զօր անոնց բռնագաղթը: Բռնագաղթի ժամանակ Կունէին կ'ամուսնանայ հայր Կարապետ Գիւլէուզեանի դստեր՝ Տիգրանուհիին հետ, եւ կը փրկէ անոր կեանքը՝ անոր տեղահանութիւնը դէպի Տէր Զօր թոյլ չտալով:

Ումիթ Քուրթը դասախօսութեան ընթացքին կը մանրամասնէ

ձեմիլ Կունէի՝ Ցեղասպանութեան ժամանակ հայերուն փրկելու ջանքերը, ինչպէս նաեւ Ցեղասպանութենէն յետոյ անոր եւ կնոջ՝ Տիգրանուհիի կեանքի պատմութիւնը:

Ումիթ Քուրթը գիտութիւններու թեկնածու (Phd) է Քլարքի համալսարանի պատմութեան ֆակուլտետի Հոլոքոստի եւ ցեղասպանագիտութիւն բաժնին մէջ եւ այժմ կ'աշխատի իր գիտական թեզի վրայ: Անոր հետազոտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Օսմանեան կայսրութեան ժամանակաշրջանին հայերու ունեցուածքի բռնագրաւման, Հայոց ցեղասպանութեան, ժամանակակից թրքական ազգայնականութեան ձեւաւորման եւ Այնթապի հայերու բռնագաղթի ու կոտորածի խնդիրները: Ան հեղինակած է «Մեծ, անյոյս թրքական ցեղը. 1911-1916 թթ. թրքական ազգայնականութեան հիմադրոյթները թրքական հայրենիքին մէջ» եւ խմբագրած է «Ապստամբութիւն եւ ոչնչացում. պետութեան ձեւաւորումը Օսմանեան կայսրութենէն մինչեւ թուրքիայի Հանրապետութիւն եւ զանգուածային բռնութիւն» աշխատութիւնները: Քուրթը պատմութիւն կը դասաւանդէ Ստամբուլի Սաբանջիի համալսարանին մէջ եւ Թաներ Աքչամի հետ միասին հեղինակած է «Օրէնքներու ոգին. հայերու ունեցուածքի կողոպուտը Հայոց ցեղասպանութեան ժամանակ» աշխատութիւնը:

### Տօնական Շքեղ Հանդիսութիւններ

Մարտնակուած էջ 1-էն

ուրուցուած չորեքինական ճաշկերոյթը նախաձեռնութեամբ Արեւմտեան թեմի թեմական խորհուրդին եւ կազմակերպութեամբ խնամակալութեան յանձնարարութեան: Շուրջ 400 ներկայներուն մէջ կը նշմարէին Լոս Անճելոսի Հայաստանի նախկին հիւպատոս եւ այժմ Մեքսիկայի դեսպան Գրիգոր Յովհաննիսեան, Հայաստանի հիւպատոս Ռազմիկ Ստեփանեան, հայ աւանդական երեք կուսակցութիւններու եւ այլ պաշտօնական մարմիններու ներկայացուցիչներ, Գերշ. Վաչէ Արք. Յովսէփեան եւ Մուշեղ Եպսկ. Պապայեան: Պետական բարձրաստիճան անձնակազմի թիւներու շարքին էին գոնկրեսական Ատամ Շիֆ, Լոս Անճելոսի քաղաքապետ էրիկ Կարսիէթի եւ այլ ակնաւոր հիւրեր:

Ճաշկերոյթի ընթացքին գործադրուեցաւ պատշաճ յայտագիր: Ամերիկայի եւ Հայաստանի զոյգ քայլերգներու ունկնդրութենէն ետք բարի գալուստի ջերմ խօսքերով հանդէս եկաւ օրուան հանդիսավար արժ. Խաժակ քհնյ, Շահբազեան:

Այնուհետեւ գնահատանքի եւ շնորհակալական ու բարեմաղթութիւններու սիրազեղ ելոյթներ ունեցան Լոս Անճելոսի քաղաքապետ էրիկ Կարսիէթի, Լոս Անճելոսի քաղաքապետական խորհուրդի առաջին հայ անդամը՝ Փոլ Գրիգորեան, Լոս Անճելոս գաւառի վերակայու Մայքըլ Անթոնովիչ, գոնկրեսական Ատամ Շիֆ (որ Յովհանն սրբազանի փոխանցեց այս տարի Ապրիլի 24-ին, Ուաշինկթընի

Գափիթոյի շէնքին վրայ ծածանած ԱՄՆ-ի Դոշակը), Գալիֆոբիոյ գոնկրէսի անունով Խաչօ Աչաճեան, Կլէնտէյլի քաղաքապետ Արա Նաճարեան, Թեմական Խորհուրդի Նախագահ Իրաւաբան Ժողջֆ Կանիմեան, Խնամակալութեան յանձնարարութեան անունով Տքթ. Վահրամ Պիրիճիկ, Ս. Էջմիածնի միաբանութեան անունով Գերշ. Մուշեղ Եպս. Պապայեան:

Սոյն ճաշկերոյթի երաժշտական բաժինը վստահուած էր «Էլէմընթ» նուագախումբին: Երգչուհի Սոսէ Արամուհի օրուան պատշաճ երգով ու նուագով խանդավառեց միտոյրտը:

Վերջին խօսք առնողն եղաւ չորեքինայի Յովհանն սրբազան: Ան իր շնորհակալութիւնները յայտնեց միջոցառման բոլոր մասնակիցներու եւ կազմակերպիչներուն, առանց մոռնալու իր հոգատար մայրը... այս յորդորեց հաւատարիմ մնալ մեր աւանդութիւններուն եւ Աստուծոյ, սիրելի Հայրենիքն ու էջմիածինը: Այնուհետեւ յարեց. «Այն ինչ որ կատարեցինք՝ մեր հոգու պարտքն է: Ամէն ինչ հաւաքական աշխատանքով կ'ըլլայ: Որպէս հոգեւորական՝ բախտաւոր եղած եմ որ միշտ ունեցած եմ զօրակցութիւնը հոգեւորականներու եւ աշխարհիկ ծառայողներու»:

Նախկին առաջնորդ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանի «Պահպանիչ» աղօթքով վերջ գտաւ սոյն յիշարժան հանդիսութիւնը: «Մասիս» կը շնորհակալուի Յովհանն Սրբազանի չորեքինայի, մաղթելով քաջառողջութիւն, երկար եւ արդիւնաւէտ տարիներ:

### Միմակի խումբի Նախագահները Ղարաբաղի Մէջ

Մարտնակուած էջ 1-էն

տը ներկայացուցած է, թէ ինչ կը կատարուի սահմաններու վրայ: Ատրպէյճանի կողմէ այդ կողմիտ խախտումները եւ ծանր զինատեսակներու օգտագործումը անհրաժեշտ է որ ենթարկուին մնայուն դիտարկումներու եւ միջնորդները կարողանան աւելի խոր պատկեր կազմել իրավիճակի մասին:

Դաւիթ Բաբայեանի համաձայն, Ղարաբաղի իշխանութիւնները հանդիպումներու ընթացքին արժարժած են նաեւ բանակցութիւններուն Ստեփանակերտի մասնակցութեան անհրաժեշտութեան հարցը:

«Բայց հիմա կանգնել ենք այսպիսի ծանր իրավիճակի առջեւ՝ մի կողմից խեղաթիւրուած

ձեւաչափով, բայց բանակցային գործընթացի շարունակում, միւս կողմից՝ դրա տապալում: Քանի որ աւելի նախընտրելի է բանակցային գործընթացի շարունակումը, եւ ի վերջոյ սա նաեւ Արցախի դիրքերն է ամրապնդում, որովհետեւ ի վերջոյ միջազգային հանրութիւնը մի օր գալու է այն եզրակացութեան, որ առանց Լեւոնայի Ղարաբաղի Հանրապետութեան անհնարին է կարգաւորել հակամարտութիւնը: Հիմա մենք սպասում ենք, իհարկէ, ձեռքներս ծալած չենք սպասում, աշխատում ենք այդ ուղղութեամբ, բայց գալու է մի օր, երբ այդ ձեւաչափը վերականգնուելու է: Առանց դրա ուղղակի անհնարին է այս հակամարտութեան կարգաւորումը», - ըսաւ Ղարաբաղի պաշտօնեան:

### ՍՈՒՐԻԱՅԱՅՈՒԹԵԱՆ ՆՈՒՐՈՒԱԾ ԶՈՅՊ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

### ԳԱԼԻՖՈՐՆԻԱ ՆՇԵՑ ՀԱՃՆՈՅ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 95ՐԴ ՏԱՐԵՂԱՐՁ



Անցնող շաբաթուան ընթացքին Լուսանձեյտասահայ գաղութէն ներս տեղի ունեցան յատկանշական զոյգ միջոցառումներ նուիրուած սուրիահայութեան եւ կազմակերպութեամբ Սուրիահայութեան Օժանդակ Մարմնին:

Առաջինը՝ տեղի ունեցաւ Կիրակի, Հոկտեմբերի 18ին, 2015, Կլենտէյլի Հայ Սքուլի հանդիսասրահին մէջ, որուն ներկայ էր շուրջ 900 հոգի:

Կազմակերպիչ Մարնի անուշով խօսք առնելով տիրա վազգէն Մատենյեան ամփոփ գիծերով ներկայացուց սուրիահայութեան օրհասական վիճակը: Ան կոչ ուղղեց ներկաներուն անվերապահօրէն աջակցիլ մեր ազգակիցներու անմիջական կարիքներուն:

Գործադրուեցաւ զեղարուեստական բարձրորակ ձուխ եւ այլազան յայտագիր մը, մասնակցութեամբ Համագրայինի «Սայթ Նովա» երգչախումբին (խմբավար Նորա Ռումեան-Պայրամեան) եւ «Անի» պարախումբի (զեղարուեստական ղեկավարներ՝ Սիւզի Բարսեղեան եւ Եղիա Հօշարեան):

Ներկաները սրահէն բաժնուեցան զուտ հայկական զեղարուեստական բարձրորակ յայտագիր մը ըմբռնած ըլլալով մեծ յազեցուածութեամբ:

Երկրորդ միջոցառումը տեղի ունեցաւ անցեալ Չորեքշաբթի 21 Հոկտեմբեր 2015, Պրեյքսնքի ազգային առաջնորդարանի Գալաթեան սրահին մէջ կազմակերպութեամբ Սուրիահայութեան Օժանդակ Մարմնի (SARF) եւ Ամերիկացի Հայ Աւետարանչական Միութեան (AMAA): Ներկայ էին գաղութիս կրօնական համայնքներու եւ աւանդական կուսակցութիւններու ներկայացուցիչները:

Սուրիահայութեան ի նպաստ զօրակցական ելոյթներով հանդէս

եկան Ռաֆֆի Քէնտրիճեան, Վեր. Պերճ Ծամպազեան, Ջաւէն Խանձեան եւ Միքայէլ Եպս. Մուրատեան:

Օրուան գլխաւոր զեկուցաբերն էր Սուրիոյ Հայ Աւետարանական համայնքի նախագահ՝ Պատուելի Յարութիւն Սէլիմեան: 2011 թուականէն ի վեր քաղաքացիական կռիւներու թիրախ դարձած Սուրիոյ մասին խօսելուց եւ յատկապէս սուրիահայութեան ներկայ իրավիճակին մասին արտայայտուելով Պատ. Յ. Սէլիմեան ընդգծեց որ ասիակ «մեր ազգային հիմնահարցն է: Մեզ կը մտահոգէ տեղւոյն հայութեան իրականութիւնը եւ ապագայի կացութիւնը: Աշխարհաքաղաքական եզրի մը առջեւ է սուրիահայութիւնը: Իսկ բոլոր մեծ տէրութիւնները իրենց համար կիրգակէտ դարձուցած են: Վտանգը այսօր մեր դռները հասած է: Վերէն եկող հրթիռները ոչ միայն տուն մը, այլ թաղամաս մը կը քանդէ»: Պատ. Յ. Սէլիմեան նշեց նաեւ որ նախապէս 160,000 մարդ հաշուող հալչպահութիւնը, այսօր հասած է 8-10,000 ի: Ապա ընդարձակ տեղեկութիւններ տուաւ Լիբանան (15,000), Հայաստան (15,000) եւ Եւրոպա հաստատուած սուրիահայ գաղթականներու մասին: Այս վերջիններու վիճակը կը մնայ անորոշ:

Իր ելոյթի աւարտին կոչ ուղղեց օգնել սուրիահայութեան «մենք պատասխանատուութիւնն ունինք օգնելու բոլոր հայերուն»: Իր փակման խօսքին մէջ առաջնորդ Յովնան Սրբազան բարձր գնահատեց պատ. Յար. Սէլիմեանի ելոյթը եւ ըսաւ «Ամենապարփակ եւ լրացուցիչ է: Ինք եւս կոչ ուղղեց աջակցութիւն ցուցաբերել մեր հայրենակիցներուն եւ յարեց «... մեր անտարբերութիւնը՝ սխալ մըն է, որ պէտք է սրբագրենք...»:

Գալիֆորնիոյ Փաստինա քաղաքի հայ գաղութին համար աւանդութիւն դարձած է ամէն տարի նշել Հաննոյ Հերոսամարտի տարեդարձը: Արդարեւ Կիրակի, Հոկտեմբերի 18ին, 2015 Փաստինայի Ս. Գրգոր Լուսաւորիչ եկեղեցու մէջ Ս. Պատարագի աւարտին տեղի ունեցաւ Հաննոյ Հերոսամարտի նահատակներու եւ մեզմէ անդարձ մեկնած հաճնցիներու յիշատակին նուիրուած հոգեհանգիստ:

Այնուհետեւ եկեղեցուց կից, «Կիրակոս» սրահին մէջ տեղի ունեցաւ աւանդական հարիսաչի հոգեճաշ, կազմակերպութեամբ Հաննոյ Հայրենակցական Միութեան վարչութեան եւ Տիկնանց Օժանդակ Մարմնին:

Շրջանի հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Սարգիս Քհչյ. Բեղոյեանի կողմէ սեղաններու եւ մատաղի օրհնութենէն ետք ներկաները յոսկակայս երգեցին «Օղանաւ եկաւ» հաճնցիներու ազգային քայլերգը, մենակատարութեամբ շնորալի երգից Աւօ Չոլաքեանի:

Հաճնոյ Հայրենակցական Միութեան նորակազմ վարչութեան ատենապետ Ջաւէն Քէօշկերեան իր բացման խօսքին մէջ, ողջունեց բոլոր ներկաները, որոնք եկած էին իրենց յարգանքի տուրքը մատուցանելու Կիլիկիոյ անառիկ քաղաքներէն Հաննոյ Հերոսամարտի անմեղ նահատակներու յիշատակին:

Օրուան հանդիսավար Գրիգոր Սաթմեան ոգեկոչելով հաճնցիներու դիւցազնական ինքնապաշտպանութիւնը՝ նահատակները դասեց մեր սրբացած հերոսներու շարքին:

Մաշտոց գոլէճի նախագահ Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեան

ասիկներու ցուցադրութեամբ ներկաներուն ծանօթացուց «Հաճնը սիրուն»: Ապա հակիրճ պատմական ըրաւ Հաճնի եւ անոր ինքնապաշտպանութեան իննսունամեայ պաշարման վիճակին ու բացասական հետեւանքներուն մասին: Առանձնապէս շեշտեց ժողովուրդի հայրենասիրութիւնն ու քաջարի հերոսներու սիրագործութիւնները:

Սոյն միջոցառման ընթացքին ելոյթ ունեցաւ նաեւ Փաստինայի ծանօթ ազգայիններէն Խաչիկ (Քրիս) Շահինեանը: Ան ոգեկոչելէ ետք յանուն հաւատքի եւ հայրենիքի նահատակուած հաճնցիներու յիշատակը նշեց որ ինք յառաջիկայ տարուան ամերիկեան ընտրութեանց ընթացքին Սան Կապրիթիլ հովիտի շրջանէն թեկնածու է Գալիֆորնիոյ սենատի աթոռին համար: Ան խոստացաւ օգտակար հանդիսանալ հայ համայնքին եւ որպէս հաճնցի, ինդրեց իր հայրենակիցներու աջակցութիւնը:

Գործադրուեցաւ օրուան պատշաճ զեղարուեստական ձուխ յայտագիր մը, որուն իրենց մասնակցութիւնը բերին շնորհալի արուեստագէտներ Վարդգէս (Վագօ) Չոլաքեան, Տօքթ. Արմէն Պապայեան, Հրայր Արքոյեան եւ Մէրի Քէօշկերեան:

Կը շնորհակտորենք նորակազմ վարչութիւնը իրենց կազմակերպած եւ աւանդութիւն դարձած յաջող ձեռնարկին համար:

Կիմանանք թէ նոյն օրը թէ Պէյրութի եւ թէ Լուիզիանա նահանգի Պատիւ Ռուժ քաղաքներուն մէջ տեղի ունեցած են նոյնանման յաջող միջոցառումներ, նուիրուած Հաննոյ Հերոսամարտի 95րդ տարեդարձին:

Գ.Մ.

### ԱՄՆ-Ի ՀՐԵԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԿՈՉ ԱՐԱԾ Է ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՆ ԾԱՆԱԶԵԼ ՀԱՅՈՑ ԾԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

ԱՄՆ-ում գործող Հանրային հարցերու հրէական խորհուրդը (Jewish Council for Public Affairs) կոչ ըրած է ԱՄՆ իշխանութիւններուն Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ թուրքերու կողմէ հայերու կոտորածները որպէս ցեղասպանութիւն ճանչնալ՝ տարիներ շարունակ այս հարցի վերաբերեալ նրբօրէն խուսանաւելուց լետոյց:

Հրէական խորհուրդը աւելի կանուխ անցկացուցած իր ամե-

նամեայ հանդիպման ժամանակ կոչ ըրած է հրէական կազմակերպութիւններուն Կոնգրէսի եւ Սպիտակ տան շրջանին մէջ լոբբինգով զբաղուել, որպէսզի անոնք պաշտօնապէս ճանչնան Հայոց ցեղասպանութիւնը: Խորհուրդի խօսնակը Հոկտեմբեր 21-ին հաստատած է, որ բանաձեւը խումբի կողմէ Հայոց ցեղասպանութիւնը ճանչնալու առաջին փաստն է:

Շաբ.ը էջ 18

<b>Bedros S. Maronian</b> <b>818/500-9585</b>			<b>Siamanto B. Maronian</b> <b>818/269-0909</b>		
<b>SERVING THE COMMUNITY SINCE 1975</b> <i>More locations and more ways to service your insurance and financial needs</i>					
6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048	805 East Broadway Glendale, CA 91205	300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101			
• Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability	• Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning	• Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B	<b>A.B.A. INSURANCE SERVICES</b>		
			<b>Insurance coverage can help you financially!</b> <b>Ապահովագրութիւնը Աճիրաճեցու է</b> <i>Coverage &amp; Protection should be on the top of your priority list.</i>		
<b>Seniors 65 &amp; Up</b> Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits					

### ՔԻՒՐՏ ՄԵԾՑԱԾ, ԲՈՆԻ ԹՐՔԱՑԱԾ, ԱՅԺՄ ՀԱՅ ԿՈՉՈՒՈՂ



Բիմար Թրեմպլայ յօդուածագիր է «Ալ-Մոնիթրը»-ի Թուրքիոյ Բազկերակր սիւնակիմ: Միաժամանակ, այցելու դասախօս է Բաղաթալան գիտութիւններու՝ Փոմոնայիմ Գալիֆորնիոյ Փոլիթեքնիք Համալսարանէն ներս:

Անոր յօդուածները լոյս տեսած են «Թայմի», «Նոր Ամերիկայի», «Հիրրիթ» եւ «Ձամանի» էջերուն վրայ:

Քաղաքական բանտարկեալ Սելման Կիւլպահչէ 1 Սեպտեմբերին թրքական դատարանին մէջ թարգման մը պահանջեց:

Կիւլպահչէ կ'ուզէր խօսիլ իր մայրենի լեզուով՝ քրտերէնով:

Սակայն դատաւորը այդ խնդրանքէն շատ զայրացաւ: Ըստ դատական նիստէն ետք Կիւլպահչէի գրութեան, դատաւորը ըսած է. «Քիւլպահչէ: Այս երկրին դպրոցներուն մէջ կրթութիւն ստացած ես: Շատ անամօթ ես ու անկիրթ, հեռացիր դատարանէս»:

Եւ ըստ տեղեկութեանց, հարցը այդտեղ վերջ չէ գտած:

Դատաւոր Սեւալ Աքաշ դատարանին մէջ ոստիկաններուն ըսած է. «Անոնք ձեր գինակիցները կը սպաննեն ամէն օր»:

Անոնք ոստիկանները կը սպաննեն: Իբրեւ կին, անոնց դէմ կը կռուին, իսկ դուք այդտեղ կանգնած կը դիտէք: Անոնք հայերուն նման են: Եթէ ժամանակին չկասեցուին, Աստուած զիտէ ինչ պիտի պատահի»:

Դատաւոր Աքաշի ենթադրեալ խօսքը Թուրքիոյ մէջ իրարանցում յառաջացուց:

Օգոստոս 2014-ի նախագահական ընտրութեան ընթացքին, օրին վարչապետ Ռեճեփ Թայիփ Էրտողան, որ այժմ նախագահն է, ըսաւ. «Ան որ թուրք է, թող ըսէ թուրք էմ, եւ ան որ քիւրտ է, թող ըսէ թուրքիոյ մէջ ապրող քիւրտ մըն է: Ասոր մէջ ի՞նչ հարց կայ: Անցեալին իմ մասին տարածայնութիւններ տարածեցին: Անոնք ըսին, որ ես վրացի եմ: Կը ներքէք, սակայն անոնք իմ մասին նոյնիսկ աւելի տգեղ բաներ ըսած են: Անոնք զիս հայ կոչած են»:

Էրտողանի բառերը այդ օրերուն զայրոյթ յառաջացուցին:

Սակայն այժմ պէտք է հարց տանք, որ ինչու մէկը հայ կոչուելուն համար կը վիրաւորուի: Երբ մեծամասնութեամբ քիւրտերով բնակուած հարաւային ձիգրէ քաղաքին մէջ Սեպտեմբերին հրահաղարի դրութիւն յայտարարուեցաւ, ոստիկանութիւնը բարձրախօսերով յայտարարեց. «Հայերը ձեզմով հպարտ են: Դուք բոլորդ ալ հայեր էք»:

7 Սեպտեմբերին նախագահական խորհրդական Պոլոհան Քուզու «Թուրքիոյ»-ի վրայ արձանազրութիւն մը կատարելով Քրտական Աշխատաւորական Կուսակցութեան (ՔԱԿ) անդամներուն ակ-

նարկելով ըսաւ. «Սպաննուած ահաբեկիչներուն մարմինները պէտք է քննուին: Այդ ատեն ի յայտ պիտի գայ, որ անոնց մեծամասնութիւնը թրքապետութեանն է: Արթնցէ՛ք քիւրտ եղբայրներս, արթնցէ՛ք այլեւս»: Հասարակութեան հակազդեցութիւնը նշանակալից էր: Անոնց մեծամասնութիւնը ծաղրական եւ հասարակ էր: Սակայն միտք բանին ոչ իսլամները (իբրեւ չթրքապետութեան) զանազաններն էր եւ զանոնք նկատել ահաբեկիչներ: Ըստ այդ արձանագրութեան, ՔԱԿ-ի անդամները իսլամներ չեն, ուստի մեր եղբայրները չեն: Քուզու ըսել կ'ուզէր, որ ըմբոստացողները հայեր են եւ ոչ թէ քիւրտեր: Եւ անգամ մը եւս «հայ»-ը ատելութիւն է թշնամանք յառաջացնող եզրի մը վերածուցաւ:

«Ալ-Մոնիթրը» հարցազրոյց կատարած է 10 հայ եւ քիւրտ քաղաքագէտներու, վերլուծաբաններու եւ գործիչներու հետ ջանատու հասկնալ քիւրտերը հայ կոչելուն այս ընթացքը ինչպէ՞ս կ'ազդէ հասարակութեան վրայ եւ ի՞նչ հետեւանքներ կրնայ ունենալ մօտ ապագային: Ինչո՞ւ Արդարութիւն եւ Բարգաւաճում կուսակցութեան անդամներն ու կառավարական պաշտօնեաները այսպիսի ատելութեամբ լեցուն խօսեցած կ'օգտագործեն ընտրարշաւի ընթացքին:

Փաստաբան եւ նահատակ հայ մտաւորական Հրանդ Տիրքի բարեկամ Ֆեթհիյէ Չեթին, որ իր թաքնուած հայկական արմատները յայտնաբերած է «Ալ-Մոնիթրը»-ի յայտնեց. «Երբ Օհիւն Սամասթը կրակ բացաւ Հրանդի վրայ, ան բացազանչեց «մեռիք հայ»: Սակայն ան իր կեանքին մէջ այլ հայ մը չէր ճանչցած կամ հանդիպած: Սամասթ դատարանին մէջ ըսաւ. «Եթէ գիտնայի, որ Տիրք ընտանիք եւ գաւակներ ունի, զինք չէի սպաննէր»: Այդ մէկը ցոյց կու տայ, թէ ինչպէս քաղաքական համակարգը ձերբազատելի կեանքեր կը ստեղծէ: Հայը այդ ցանկին վրայ գտնուող անարժէք կեանքերէն մէկն է: Նոր սերունդներուն կը սորվեցնեն, որ հայերը մարդ չեն, սակայն էակ մը, զոր պէտք է ատել եւ սպաննել, յոռեգոյն թշնամի մը: Եւ դպրոցական ծրագիրը գոյութիւն ունեցող կրակին վառելանիւթ կը հայթայթէ»:

Չեթինի բացատրութիւնը համահունչ է փորձառութեանը քիւրտ

### ԱՆԱՐԴԱՐ ԿՃԻՈՐ

#### ՄԵԹՐ ՊԱՐԳԵԻ ԴԱԽԻԹԵԱՆ

որակաւոր ա՛յն պատարագն է, որ միշտ կ'երգենք: Իսկ հանդիսաւոր օրերուն՝ հռչակաւոր Կոմիտասեան Պատարագը: Նկատելի է որ Եկմալեանի «Սուրբ Սուրբը» որ ամէն Կիրակի կ'երգենք ու կը լսենք, երկնաթուիչ նօթաներ ունի, եւ այնքան կը բարձրացնէ այդ սրբազան երգը զէպի վեր օրքան արժանի է: Մինչդեռ Կոմիտասեան Պատարագի «Սուրբ Սուրբը» միապաղաղ, լօ քի, երբեք բարձր նօթեր չունեցող երգ մըն է: Մտածեցի թէ ինչո՛ւ այս թերութիւնը Կոմիտասի մօտ, երբ իր ուսուցչին Եկմալեանի Պատարագ ինք այնքան լաւ սերտած էր: Բայց երբ շարունակեցի երգել կամ լսել Կոմիտասեան Պատարագը, երբ կարգը եկաւ «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ», եւ մանաւանդ «Հոգի Աստուծոյ» երգերուն, «Քրիստոս պատարագեալ բաշի ի միջի մերում» եւ ապա «Գոհանամք գբէն Տէր» եղբարփակիչ երգերուն, հոն թուիչքը զէպի երկինք այնքան շեշտուած է եւ կատարեալ, բազմաձայն մասերու հոյակապ համագրութեամբ: Ուրեմն Կոմիտաս նախընտրած է այդ երկնառաք թուիչքը տալ իր նախընտրած երգերուն: Լսեցէք հետեւեալ բացառիկ վկայութիւնները Կոմիտաս վարդապետի ստեղծագործութեան մասին, բոլորն ալ օտար երաժշտագէտներէ:

«Եթէ Կոմիտաս գրէր միայն Անտունին, այդ էլ բաւական կը լինէր նրան խոշոր արուեստագէտ համարելու»:

**Տէրիտիտի**  
«Ամէն անգամ որ ունկնդրեմ Կոմիտասի Պատարագը, կը հոգեփոխուիմ, կը վերանամ: Իր Պատարագը գլուխ գործոց մըն է»:  
**Լիտիք ԱՆՏՐԷՍ ՄԱՐՍԷԼ**

«Անբեւակայ լիօն դժուարին ձեռնարկ մըն էր Կոմիտասի ստանձնածը: Անհուն համբերութեան, քաջութեան, սիրոյ գործ մը: Գիտունի, հանճարի գործ: Չեմ գիտեր թէ դուք հայերդ իր մեծութեան մէջ կ'ըմբռնէ՞ք Կոմիտասի գլուխ հանած աշխատանքը»:  
**Լիտիք ԱՆՏՐԷՍ ՄԱՐՍԷԼ**

«Պեթովէնի իններորդ համաճարակին վերջամասը ունկնդրած ատեն, յաճախ խաբկանքը կ'ունենաս փոխադրուելու Կոմիտասեան Հորովելներուն»:  
**ՍՈՎԵՏԱԿԱՆ ԱՐՈՒԻԵՍ 1969**

Եւ վերջապէս՝ «Ո՛վ կ'ըսէ թէ լեռները չեն քալեր: Կոմիտասի համերգը շարժեց եւ մենք տեսանք զանոնք»:  
**ԱԼ ԱՀՐԱՄ ՕՐԱԹԵՐԹ, ԳԱՀԻՐԷ**

Այո՛, Հայ ժողովուրդը սեբունդներով հարստացաւ Կոմիտասի ամենէն թանկագին երաժշտական գործերով: Անոնցմէ սերունդներ միշտ երգեցին, կ'երգեն ու պիտի երգեն վարդապետին զգայուն երգերը՝ Կոռուկը, Անտունին, Հորովելը, Գարուն ա ձիւն ա արել, Հայաստան երկիր դրախտավայր, եւ այլ բազմաթիւ գեղարուեստի հարազատ գործեր որոնք անմահացուցին Կոմիտաս վարդապետը:



պիտի կարենար ըլլալ, այս անգամ Պեռլինի մէջ, ուր եւս հրաւիրուած էր բանախօսելու: Վրայ հասաւ սակայն տարաբախտ տարին հայերու ձերբակալութեանց եւ կոտորածին:

Այդ բոլորէն աւելի, Մեծն Կոմիտասի գերագանց արգասիքը իր հետեւողական աշխատանքին արդիւնքը եղաւ, երբ անձամբ շրջեցաւ Հայաստանի գիւղերը՝ լսելու համար հայ գեղջկական երգերն ու աւանդական պարերու եղանակները՝ ուղղակի աղբիւրէն: Չանոնք բիւրեղացուց, դասական նուագի վերածեց, վերստին ձայնագրեց եւ ըրոպական ձայնագրութեամբ՝ փրկելով հարիւրաւոր երգեր իսկական կորուստէ: Ինչ որ ունինք այսօր Կոմիտաս վարդապետէն այդ հարազատ երգերուն եւ պարի եղանակներուն հանճարեղ արդիւնքն է: Այստեղ կարեւոր կէտ մը կ'ուզեմ նշել: Կոմիտասի երաժշտութիւնը ա՛յնքան ինքնատիպ եւ հան-

ուր այս ձիու պատմութիւնը: «Ձի թանեմ, ինծի, ինքզինքս տանիմ եւ ջուրը նետուիմ» կը նշանակէ, ուր ձին եւ galloping դերանունն ալ աւելցուած են թարգմանութեան մէջ եւ հրատարակուած, հանգիստ շունչով մը: Կը տեսնէք թէ ինչ ըսել կ'ուզեմ: Անտունիին երաժշտութիւնը հոյակապ, իսկ բառերը ենթակայ անոր, չհասկցուելու աստիճան, կամ անոնց կարեւորութիւն չտրուելու աստիճան:

Օրինակ մըն ալ Կոմիտասեան Պատարագն: Կոմիտաս աշակերտեցաւ Մակար Եկմալեանի՝ Թիֆլիսի մէջ: Եկմալեանի Պատարագը



**Save Support Sustain**

Small text: Syrian Armenian Relief Fund, P.O. Box 1948, Glendale, CA 91209-1948



[www.syrianarmenianreliefund.org](http://www.syrianarmenianreliefund.org)

### ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ 96ՐԴ ՏԱՐԵԺՈՂՈՎԸ

### ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՑ ՀԱՄԱԺՈՂՈՎ Նախապատրաստական ժողով Արեւմտեան Թեմի Հաստատման 90 ամեակին



#### ՎԵՐ. ՆՇԱՆ ՊԱԳԱԼԵԱՆ

Շատերու համար «հրաշք» բառը կը նշանակէ անսպասելի կամ անհավատալի բան մը: Բայց բոլոր անոնց համար, որոնք կը հաւատան Յիսուս Քրիստոսի, այս բառը կը նշանակէ, թէ Աստուած կը գործէ աշխարհի մէջ, առաջնորդելով մարդոց միտքն ու սիրտը դէպի Իր ողորմութեան:

Այս տարի, Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան (ԱՀԱԸ) 96-րդ Տարեթողովը եւ անոր յարակից գործունէութիւնները տեղի ունեցան Սան Ֆրանսիսքոյի մէջ, Հոկտեմբերի 15-18 օրերուն, հիւրընկալութեամբ Հայ Աւետարանական Գողգոթա Եկեղեցիին:

Համաժողովին ընդհանուր նիւթը՝ «Հարիւր Տարիներ-Վերապրելու Հրաշքը» ներկայանալուն մէջ արծարծեց Հայոց Յեղասպանութեան յիշատակը, միեւնոջն ատեն յիշեցնելով այն մեծ նուիրումն ու գոհողութիւնը բոլոր անոնց, որոնք վերակերտեցին Հայ ժողովուրդին

կեանքը, վերաշինելով եկեղեցիները եւ դպրոցները եւ վերակազմելով Հայ գաղութները, որոնք բնաջնջուեցան 1915-ին: Իսկ այս օրերուն տեղի ունեցող Սուրբոյ պատերազմը, եւ անոր քայքայիչ հետեւանքները մեր ժողովուրդի կեանքին ու կառուցուածքին մէջ, յատկապէս Սուրբոյ եւ Լիբանանի մէջ, ցոյց կու տայ թէ այս օրերուն եւս մեզմէ կը պահանջուի միեւնոջն վճռակամութիւնը եւ միեւնոջն վստահութիւնը Աստուծոյ հանդէպ:

ԱՀԱԸ-ի համաժողովի նախորդող օրերուն տեղի ունեցաւ նաեւ Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդի (ՀԱՀԽ) ժողովը, որու ընթացքին ներկայացուեցան Հայաստանի եւ արտերկրի մէջ տեղի ունեցող Հայոց Յեղասպանութեան նուիրուած ոգեկոչումներու տեղեկագիրները, ինչպէս նաեւ աշխարհացրիւ Հայ Աւետարանական համայնքներու գործունէութիւններու տեղեկագիրները եւ անոնց դիմագրաւած մարտահրաւերները:

Երեքշաբթի, Հոկտեմբեր 13, 2015ին, Արեւմտեան Ամերիկայի Առաջնորդարանին մէջ, միօրեայ մասնայատուկ Համագումար մը տեղի ունեցաւ՝ Թեմին ներս ծառայող բոլոր Հոգեւորականներու ներկայութեան եւ մասնակցութեան:

Ժողովի օրակարգային նիւթերը նախապէս յատուկ ծրագրաւորումով պատրաստուած եւ մշակուած էին՝ Արեւմտեան Թեմի պաշտօնական հաստատման 90 ամեակին առիթով, յատկապէս կեդրոնանալով Հայ Եկեղեցւոյ եկեղեցական, հովուական, բարոյական, ընկերային եւ աստուածաբանական բովանդակութեան եւ առաքելութեան: Թեմը պաշտօնապէս հաստատուած է 1898ին որպէս Թեմական մեծ կառույց (Միացեալ Նահանգներ, Գաւառ եւ Հարաւային Ամերիկա) եւ ապա, 1927ին, բաժնուած են անկախ երեք Թեմական կառույցներու:

Այս հեռանկարով, աշխատանքային ընդհանուր ծիրէն ներս, ծրագրուեցաւ նոր մղում տալ Քրիստոնէական կեանքի զարգացումին եւ խորացումին, ինչպէս նաեւ նոր մղում ու շարժում տալ Եկեղեցւոյ «Աւետարանչական Առաքելութեան»: Այս ընդհանուր մերձեցումով՝ Թեմի Սրբազան Առաջնորդ՝ Գերշն. Յովնան Արք. Տէրտէրեանի խորհուրդով եւ առաջարկով, Ժողովականները, իբր աշխատանքա-

յին հիմնական նպատակ, որդեգրեցին հետեւեալ առաջադրանքը.՝ Արեւմտեան Թեմին ներս աւելի զարգացնել, զօրացնել եւ խորացնել հաւատացեալներուն կրօնական արթնութիւնը եւ անոնց Քրիստոնէական կեանքին տալ ներքին թէ արտաքին գիտակից շարժում՝ »Դէպի Հաւատքի Լոյս» բնաբանով:

Հիմնական այս մտահոգութեամբ, Հայ Առաքելական Եկեղեցւոյ բովանդակութեան եւ անոր հոգեւոր-կրօնական եւ հովուական առաքելութեան մասին ուրուագծային հակիրճ նիւթեր առաջարկուեցան եւ մշակուեցան, որոնք հանգամանալից բովանդակութեամբ պիտի ներկայացուին Փետրուար 2-3, 2016ի Թեմական «Ներկորեայ Խորհրդաժողով»ին, հետագայի համար որդեգրուած կրօնական-եկեղեցական յատուկ նպատակը:

Ժողովականները իրենց կեդրոնացումը յատուկ նպատակով սեւեռեցին «Եկեղեցի» հասկացողութեան եւ անոր հաստատ իրականութեան վրայ, որպէսզի Եկեղեցին կարենայ պահել եւ մասնաւոր զօրացնել իր սրբազան առաքելութեան այժմէութիւնը եւ կենսունակութիւնը՝ միշտ ի նպաստ հաւատացեալներուն:

Եկեղեցին կը գտնուի ինքզինքը վերադժեւորելու եւ վերասահմանելու հանգրուանին: m

ԱՀԱԸ-ի 96-րդ տարեթողովը տեղի ունեցաւ Շաբաթ օր առաւօտուն: ԱՀԱԸ-ի Նախագահ՝ Տօթթ. Նազարէթ Տարագճեան ձեռնհասօրէն վարեց ժողովը, որուն կը մասնակցէին 90-է աւելի անդամներ: Հայ Աւետարանական եկեղեցիներէ, Միութիւններէ, ԱՀԱԸ-ի տարբեր յանձնախումբերէ եւ կազ-

մակերպութիւններէ պատգամաւորներ ներկայացուցին իրենց տարեկան տեղեկագիրները եւ մտահոգութիւնները, փառաբանելով զԱստուած եւս մէկ յաջող տարեշրջանի մը համար:

Ելոյթ ունենալով ՀԱՀԽ-ի նիս-

Շաբ.ը էջ 19



Ararat Foundation  
Established 2005



Armenian Society  
of Los Angeles



Nor Serount  
Cultural Association



Tekeyan  
Cultural Association



Hamazkayin  
Educational  
and Cultural Society



Kharpert Cultural  
Association of  
America

ARARAT Foundation in conjunction with, Armenian Society of Los Angeles, Hamazkayin Educational and Cultural Society, Nor Serount Cultural Association, Tekeyan Cultural Association, Cross of Armenian Unity NGO, SAHMAN Development Agency, Armenian Philatelic Association, Armenian-Artsakh Rugs and Kharpert Cultural Association of America

PRESENT

## A UNIQUE ARMENIAN CULTURAL EVENT

### Իրայատուկ Մշակութային Միջոցառում

- Art-Painting Exhibition (ENDZA from Armenia)
- Armenian Rug Exhibition
- Old and New Armenian Stamp Exhibition
- Armenian Traditional (Unknown) Pastries
- Armenian Traditional Music and Songs (Narine Tahmazyan from Armenia)
- Presentation by the Participants
- Free Souvenirs for everyone

Art expert: Linda Stepanian - Stephanie's Art Gallery

SUNDAY, NOVEMBER 1, 2015 12:00 NOON TO 8:00PM

ARMENIAN SOCIETY OF LOS ANGELES

117 SOUTH LOUISE STREET, GLENDALE CA 91205



SAHMAN  
NGO

Co- Founder of SAHMAN NGO in RA and SAHMAN USA organization founder and president:  
Gayane Gevorgyan



Armenian & Artsakh Rugs:  
Hovik Mahserejian



Cross of  
Armenain  
Unity NGO

Founder:  
Grigor Babakhanyan



Armenian  
Philatelic  
Association

Vahak Abcarians

FREE ADMISSION - RECEPTION

Մուտքը՝ ազատ, Հիւրասիրութիւն



HaiEm.Org  
Հայ Եմ

### ՊԱՆԴՈՒԽՏԻ ԼՈՍԱՆԳԵՆՈՍԵԱՆ ՅՈՒՇԱՊԱՏՈՒՄՆԵՐԻՑ

Մասիսի ընթերցատեղի հայրենակիցներից էլուշագիրը խմբագրուի լինելու յաճճնող Լոսանջելոս քաղաքում գտնվող «Պանդուխտ» այդպես է անունանվում իր թղթակցութիւններում:

**Խաչագող, թէ քարից հաց քամող**

Անցեալ տարի ձմեռը մի քանի օրով մեկնել էի Եւրոպա: Հանգրուանել էի Շուտլեր-Խաչագող, որտեղ ապրում էր ինձ շատ սիրելի եւ հարազատ անձնաւորութիւն, իր ընտանիքով: Երկուսն էլ Շուտլերի քաղաքացիներ էին, ունէին նաեւ երկքաղաքացիութեան կարգավիճակ, ապահովուած էին աշխատանքով: Բարեկամս ապամասնակցութեամբ էին գտնուում եւ հանգրուանածս տունը նոր էին գնել: Նոր եւ յարմարաւէտ տուն ունենալու հրճուանք իրենց դէմքին նշմարում էի: Ծէնքերի մի ընդհարձակ համալիրի կազմում էր գտնուում այն, կոմունալ եւ տնային բոլոր յարմարութիւններով, անգամ ունէին ինքնասպասարկող աւտոնորոգման եւ լուսացման կայան: Ընկերակցական կամ այսպէս ասած սոցիալիստական այս ապահով երկրում: Սեփականութեան իրաւունքին վերաբերող ինչպիսի կացութեան քննարկումն ունի չգիտեմ, այն թողեցի յետագայում խորքից ուսումնասիրելու, բայց ինչ որ հասկացայ, այն է որ հողի վրայ կառուցուած շէնքում յարաբարուամենի եւ ցանկալի կենցաղային պայմաններում ապրելու իրաւունքը համարում է թո իրաւունքը: Հողի իրաւունքը ուրիշ է, դա պատկանում է պետութեան պատկան մարմիններին: Կլիմայական դաժան պայմաններին դիմակայելու եւ անվտանգութեան ու ապահովութեան համար առաւելագոյն ջանքերը ներդրում է: Հիմնական բողոքը, որ լսում էի, հարկերի բարձր դրոյթահափերն էր, եւ ի պատասխան ասում էի, կենքում այդքան էրնեկ մի տեղ չի լինում: Երիտասարդ ընտանիքներին այդքան ցածր դրոյթով եւ յարմար պայմաններով վարկաւորումը եւ խրախուսումը, ենթադրում է նաեւ այն ինչից այժմ դժգոհում էին:

Այս ամէնի հետ միասին այնպիսի հանդիպումների եւ գրոյցների ականատեսը եղայ, որ ակամայից յուշագրիս վերնագիրը խորագրուեց մեծ վիպասան Ռաֆֆիի կերտած խաչագողի կերպարը տպաւորուած էր մտքերիս մէջ: Նրանք Պարսկաստանի Սալմաստ գաւառի արտազնայ աշխատանքի մեկնող այն «ճարպիկ» հայերն էին, որոնք ընտանեկան հոգսերը հոգալու համար աներեւակայելի հնարքների էին դիմում առանց խղճի խայթի եւ խտրութիւն գնելու միջոցների մէջ, նրանք իրենց չգրուած օրէնքներն ունէին ամենայնպէս արարքը անգամ նրանց փրկիտփայտութեան եւ օրէնքի դրոյթներով կարող էր արդարացուած արարք լինել: Շուտլերի այդ փոքրիկ քաղաքում շրջագայելիս մերթ ընդ մերթ հանդիպում էինք հայերի,

որոնք գաղթել էին Հայաստանից կամ միջին արեւելքի տարբեր հայ գաղթօջախներէ:

Մի օր քաղաքի սուպերմարկետներից մէկում, բարեկամուհիս գնումներ կատարելուց յետոյ հանգիստ քայլերով սայլակի հետ մտնեցաւ աւտոմատ դրամարկղին, որտեղ կարճ հերթ էր, ես էլ հետաքրքրուած սուպերմարկետի ցուցափեղկերի, ինձ համար անսովոր գնապիտակները նայելով քայլում էի, հետեւելով իրեն: Նկատեցի, որ նա հերթի մէջ, մի քանի բաւեր փոխանակեց առջեւի կնոջ հետ, որը սայլակը լցրել էր տարբեր ապրանքներով: Արդէն հասկացայ, գրուցակիցը հայ էր: Նա մտնեցաւ դրամարկղի ինքնասպասարկող վահանակին: Բարեկամուհիս ինձ աչքով նշան արեց, որ ուշադիր նայեմ: Ես էլ նկատեցի, որ ապրանքների մեծ մասը սահեցրեց առանց դրամարկղի սկաններից անցկացնելու: Մտքումս անմիջապէս մի միտք ծագեց, սա ըստ իրեն գողութիւն է, թէ ճարպիկութիւն: Բարեկամուհիս շփոթուած եւ ամօթահարուած հայրենակցի արարքից, իր գնած ապրանքների արժէքը Card-ով վճարելուց յետոյ արագօրէն փորձեց հասնել այդ կնոջը: Ես գգոն էի, որ անյարմար եւ լարուած վիճակի ականատեսն եմ լինելու: Հասաւ կնոջը եւ ըստ երեւոյթի խորագանող հարցը արդէն տուել էր, երբ ես հասայ, լսեցի կնոջ պատասխանը «Երեւում է վիճակդ լաւ է եւ ձեռք տաք տեղից է գալիս: Դու գիտես, որ ես Հայաստանում երկու ընտանիք եմ պահում: Տղաս «նստած է» (այսինքն կ'ուզի ասել, որ բանտարկուած է)»: Բարեկամուհիս գայլաքցած միջմտեց «Թող յանցանք չգործէր ու չնստէր»: Այս խօսքից դիմացինը աւելի բռնկուեց «Աղջի դու ինչ գիտես ինչի համար է նստել»: Ես շփոթուած այս իրարանցումից, մէջ մտայ եւ բարեկամուհիս հանգստացնելով հեռացրի: Ժանապարհին միայն նրա մէկ նախադասութիւնն էր տպաւորուել ուղեղիս մէջ. «Մեր պատիւն են տանում»: Հանգստացնելու համար ընդամէնը, ասացի, - գիտես ինչ դժուար է հիմա Հայաստանում: Այստեղ էլ ինչքան հասկացայ աշխատանք էին տալիս անօրինականներին: Ամէն մէկը փորձում էր մի ելք գտնել, աւելի շատ գոյութեան ինդիքը լուծելու, քան ապրելու ինձ, թէ ուրեմն դու արդարացնում ես նրանց, ուրեմն գողութիւնը ճիշտ ձեւ է հա: Ո՛չ, - ասացի, ես գողութիւնը չեմ արդարացնում, այլ փորձում եմ հասկանալ թէ ինչու է այսպէս:

Երկու օր առաջ նոյն կարգի գրոյցի ականատեսը եղայ, երկու տղամարդկանց միջեւ: Մէկը հարցրեց.

- Կարողացար հանել. միւսը պատասխանեց,

- Ձէ, չյարմարուեց, բայց բան չկայ, կը յաջողացնեմ:

Ըստ երեւոյթի ինչ որ արժէքաւոր բանի մասին էր խօսքը: Այստեղ «հանելը» դա գողութիւն

### ԵՍ ԳՆԱՅԻ ՏԵՐ ԶՕՐԻ ԱՆԱՊԱՏ

ՅԱՍՄԻԿ ԴԱՆԻԷԼԵԱՆ

Արարատեան դաշտով ես գնացի Տէր Զօրի անապատ, որ գլուխս խոնարհեմ: Գլուխս դրի քարի վրայ, աղի համ զգացի, գլուխս բարձրացրի երեխայի ձայն լսեցի, երեխան գոռում է «մամա ծարաւ եմ մամա» եւ ինչ տեսայ՝ սեւ ազուաների եռամ հաւաքուած, որս էին անում իրար ձեռքից խլում: Ոտքերիս տակ աւազ էր եւ այդ աւազը շարժում էր: Տարածքը ազուաների ծայրը չէր երեւում եւ ինչ պարզուեց, որ ի՞նչ մարգարէներ կար ոտքերիս տակ: Քամին էր ոռնում, քամին էր սուլում ու մի խարտեաշ մանուկ, «մայրիկ» էր գոռում ու ազուաների սէրն էր գրկում: Արարատեան դաշտով ես վերադառնալիս Տաւրոսի լեռը տեսայ-տեսայ իմ ծննդավայրի արեան կանչը իմ աղբիւրներն էին խլել, Մհերի դուռն էին փակել ապուպապիս տունն էին խլել: Աչքերիցս արցունք է գալիս: Տէր Ողորմեա, Տէր Ողորմեա անստունին տո՛ւն տուր, հային գթութիւն տուր: Տէր Զօրի անապատի գերեզմանը այսքան մեծ: Ես գերեզմաններ շատ եմ տեսել, բայց այսքան գիշատիչներ՝ ազուաներ, անգղներ չեմ տեսել Աստուած ամենակարող փոքր ազգիս այսքան գերեզման: Տէր Ողորմեա, Տէր Ողորմեա



այսքանից յետոյ տէր կանգնէք մեր հողին, մեր աղօթքատեղ Ախթամարին: Մեր պարծաքն են, մեր հերոսները չեմ մոռանայ Արաբոյին, Չաւուշին, որ ասացին մենք ունենք մի յենարար հայրենիք եւ Աստուած: Կ'ուզեմ միտքս հասկացողին, ոչ կարդացողին, ողջ աշխարհը թող իմանայ Տարոն, Սասուն ծափահարէք տուշմանին, իմ պարծաքը Արարատն է, յոյսի կայանս Սեւանն է: Իմ յաղթական ծաղկած հայրենիք, ի՞նչ պատահեց գաղթական դարձանք այժմ պէտք է աչքերնիս պահենք Սեւանի վրայ, որ բակիրովը այստեղ ոտքերը չլուայ:

արտայայտութեան նոր ձեւ էր: Մտքերս չէի կարողանում դասաւորել, ինչուների շարքը երկար էր: Հայաստանի շուրջ ծառայած մարտահրաւէրները, արտագաղթը, հայապահպանութեան ինդիքները, ժողովրդի ծանր սոցիալական վիճակը: Այս ամէնին ահա գումարուում է հայի ինքնութեան մէջ, ձեւաւորող այն նոր կենսակեր-

պը, որ աւանդական սփիւռքի դիմագիծը, որպէս աշխատասէր եւ ազնիւ քաղաքացիի աղաւաղում էր: Այսպիսով, գլխաւոր հարցը, որ շփոթուած ուղեղիս մէջ դաջուել էր. Արդեօք քարից հաց քամող մեր աւանդական կերպարի մէջ «Նաչագողի» կերպարը դարձել է տիրակալ, բայց մենք լուր չունենք կամ լուր ունենք բայց լուր ենք:

Statement of Ownership, Management, and Circulation table with columns for publication name (MASSIS WEEKLY), issue frequency (WEEKLY), circulation numbers (3,500 total), and postage rates.

Ձեր Ծանուցումները Վստահեցէ՛ք «Մասիս» Շաբաթաթերթին T: (626) 797-7680 F: (626) 797-6863 massis2@earthlink.net



ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՄԻՋՈՒԴԻՆԵՐՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՍԱՔՐԵԼՈՒ ՀԱՍԱՐ

- Իրարու խառնել հաւասար չափով՝ առանց կռտերու աղացած կիրորն (կեղեւի հետ միասին), մեղր եւ ձիթապտուղի իւղ: Պահել սառնարանի մէջ եւ խմել երիկամունքներուն մէջ աւագահատիկներ ըլլալու պարագային՝ մէկական ճաշի դգալ՝ օրը 3 անգամ՝ ուտելէն 30 վայրկեան առաջ:

Երիկամունքներուն մէջ քարի գոյութեան ժամանակ՝ 10 թէյի դգալ թրթնջուկի սերմերուն վրայ լեցնել 1 լիթր «կազոր» տեսակի գինի, թրմել 3 օր: Խմել ուտելէն 30 վայրկեան առաջ՝ օրը 3 անգամ, մէկական թէյի դգալ: Պարունակութիւնը օգտագործելէ առաջ ցնցել:

Մէկ ճաշի դգալ խնձորի մանրուած կեղեւի վրայ լեցնել 1 գաւաթ եռացած ջուր, թրմել 30-40 վայրկեան: Խմել երիկամունքներու բորբոքման ժամանակ՝ օրը 3 անգամ, գաւաթի 1/3 մասը, ուտելէն 30 վայրկեան առաջ: 50 կր. ընկոյզի միջուկը մանրելով փոշիացնել, վրան լեցնել 1 գաւաթ կաթ, եփել, ձգել, որ սառի: Խմել օրուան ընթացքին: Օգտակար է երիկամունքներու հիւանդութեան ժամանակ:

Դժուարամիզութեան պարագային՝ օրը 3 անգամ, ուտելէն 30 վայրկեան առաջ ընդունիլ ջրոսպի փոշի՝ վրայէն ջուր խմելով:

ՆԻՀԱՐՆԱԼՈՒ 10 ԿԱՆՈՒ՝ ԱՌԱՆՑ ՅԱՏՈՒԿ ՍՆՆԴԱԿԱՆՈՒՄ

Նիհարնալու ընդամէնը 10 կանոն, որոնք կ'օգնեն ձեզի մէկ ամսուան մէջ նիհարնալ 3 քիլոկրամ՝ առանց յատուկ սննդակարգ պահելու:

1. Նախաճաշէն կէս ժամ առաջ խմեցէք մէկ գաւաթ տաք ջուր:
2. Սեւ թէյը փոխարինեցէք կանաչով:
3. Շաբաթը նուազագոյնը երկու անգամ մէկական ժամ գրադեցէք մարմնամարզութեամբ:
4. ձերմակ հացը փոխարինեցէք ամբողջական հացահատիկներու

ԻՆՉ ՊԵՏՔ Է ՈՒՏԵԼ ՅԱՃԱՒ ԺՊՏԱԼՈՒ ՀԱՍԱՐ

Այսօր ոչ մէկը ապահովագրուած է ճնշումի դէմ, քանի որ մեր առօրեան գերճանրաբեռնուած ու լարուած է: Ջրային համակարգը կարգաւորելու համար մեր մարմինը պէտք ունի Պ կենսանիւթին, որուն օգտագործումը կ'օգնէ աւելի դիւրութեամբ յաղթահարելու ճնշում պատճառող իրավիճակները:

Վիթամին Պ1-ով հարուստ են հացը, հնդկաձաւարը, վարսակը, կորեկը, լուբիան, ոլոնը, խոզի եւ հորթի միսը: Վիթամին Պ2-ով էլ

Երիկամային եւ լեղապարկի քարերու պարագային շատ լաւ է օգտագործել ճակնդեղի, վարունգի, ստեպոլինի հիւթերու խառնուրդը (1:1,5:2 յարաբերութեամբ): Ամէն անգամ միզապարկի թուլութեան պարագային պատրաստել այս չափաբաժինը՝ 100 կրամ ուրցի սերմի վրայ լեցնել 1 լիթր չոր սպիտակ գինի, թրմել 1 ամիս՝ մութ, գով տեղ, պարբերաբար ցնցել հեղուկը: Խմել երիկամային, միզաքարային հիւանդութիւններու ժամանակ, սրտխառնոցի պարագային՝ իբրեւ միզամուղ՝ 50 կր., օրը 3 անգամ՝ ուտելէն 30 վայրկեան առաջ: Անոնք, որոնք որոշած են ազատիլ միզապարկի քարերէն, պէտք է ամէն օր խմեն սոխի թուրմ: Ապակեայ շիշը կէս չափով լեցնել մանրուած սոխով, մինչեւ վերկը աւելցնել ալքոլ կամ օղի եւ 12 օր դնել տաք տեղ կամ արեւի տակ: Ապա քամել եւ խմել մէկ ճաշի դգալ, օրը 2 անգամ՝ ուտելէն 30 վայրկեան առաջ:

Իսկ կենտրոն Մալախովը կ'առաջարկէ երիկամունքները մաքրել ձմերուկի եւ սեւ հացի օգնութեամբ: Եթէ անօթի էք, ձմերուկ կերէք, եթէ ծարաւ էք, ձմերուկ կերէք, եթէ շատ անօթի էք՝ ձմերուկ եւ սեւ հաց կերէք: Այս մաքրման ընթացքը կը տեւէ 2-3 շաբաթ:

Հացեղէնով:  
5. Ընդհանրապէս բացառեցէք արագ ուտելիքը:  
6. Մի օգտագործէք ալքոլային խմիչքներ աւելի յաճախ, քան երկու շաբաթը մէկ:  
7. Կերէք քանակէն առնուած 4 ժամ առաջ:  
8. Յարկերը բարձրացէք ոտքով, եւ ոչ թէ վերելակով:  
9. Օրական նուազագոյնը խմեցէք 2 լիթր ջուր:  
10. Երբեք հեռատեսիլի կամ համակարգիչի առջեւ մի ուտէք:

Պ6-ով հարուստ են կաթնամթերքը, միսը, լուբիան, հակիթը, թարմ պտուղը:

Մարմինը մակնեզիումով կը հարստացնեն ձուկը, ծովամթերքը, ծիրանը, չիրերը, բանջարեղէնը եւ պանանը:  
Բացի վիթամին Պ-էն, պէտք է նաեւ օգտագործել վիթամին Սի եւ պեթաքարօթին պարունակող ուտելիք՝ բանջարեղէն, կիտրոն, թուրինջ, նարինջ, հատապտուղներ (սեւ հողարջ, ազնուամորի), կանաչեղէն:

Պ6-ով հարուստ են կաթնամթերքը, միսը, լուբիան, հակիթը, թարմ պտուղը:

Մարմինը մակնեզիումով կը հարստացնեն ձուկը, ծովամթերքը, ծիրանը, չիրերը, բանջարեղէնը եւ պանանը:

Բացի վիթամին Պ-էն, պէտք է նաեւ օգտագործել վիթամին Սի եւ պեթաքարօթին պարունակող ուտելիք՝ բանջարեղէն, կիտրոն, թուրինջ, նարինջ, հատապտուղներ (սեւ հողարջ, ազնուամորի), կանաչեղէն:

ՍԱՐԴՈՑ 7 ՏԵՍԱԿ, ՈՐՈՆՅԱՒ ՊԵՏՔ Է ԽՈՒՍԱԾԻԼ

Բոլորիս քաջ ծանօթ են մարդիկ, որոնք շրջապատի մէջ ժխտական ուժ կը տարածեն՝ իրենց ողջ էութեամբ: Նմանատիպ մարդիկ կրնան վատ ազդեցութիւն ունենալ դէպի յաջողութիւն տանող ձեր գործողութիւններուն վրայ: Արդիւնքներու հասնելու համար դուք պէտք է առաւելագոյն զգօնութիւն պահպանէք: Գրգռուածութիւնը եւ ճնշումը, որոնք կ'առաջանան տեսողաշտին՝ այդ տեսակ մարդոց յայտնութեամբ, աւելորդ խոչընդոտ կը դառնան, ուստի նմաններէն պէտք է հնարաւորինս խուսափիլ:

Կը ներկայացնենք «թունաւոր» մարդոց եօթը տեսակ, որոնց հետ երբեք պէտք չէ գործ ունենալ:  
1. Խարդախները: Այս մարդիկ խարդախութեան ոլորտի մասնագէտներ են: Անոնք շատ լաւ կրնան որոշել մարդու տկար կողմերը եւ գիտեն, թէ որ լծակէն պէտք է քաշել, որպէսզի միւսներուն ստիպեն ընել այն, ինչ որ ձեռնտու է իրենց:

-Ասոնց վտանգը: Այս մարդոց հետ յարաբերիլը բացասաբար կ'ազդէ ձեր համոզումներու համակարգին եւ սեփական արժանապատուութեան զգացումին վրայ: Անոնք ճանապարհներ կը կտրեն ձեզի ստիպելու ընել այն, ինչ որ դուք չէք ուզեր կատարել, ինչ որ ձեզ, իբրեւ անհատականութիւն, կ'աւերէ: Դուք կը սկսիք ապրիլ ոչ թէ ձեր, այլ այդ մարդոց առաջնահերթութիւններով եւ համոզումներով:  
2. Նարդիզները:

Ասոնք սեփական կարեւորութեան սրուած զգացումով մարդիկ են, որոնք վարժուած են համարել, որ աշխարհը կը պտտի իրենց առանցքին շուրջ: Անոնք այնքան ալ խորամանկ չեն, ինչպէս նախորդները, սակայն նոյնպէս կը ձգտին շրջապատի մարդիկը իրենց ենթարկել: Սովորաբար նման մարդոց կ'ուզես ըսել. «Դուն տիեզերքի կեդրոնը չես»:  
-Ասոնց վտանգը:

Ասոնք սեւեռած են իրենք իրենց եւ կեդրոնացած՝ միայն իրենց ինդիւիդուական վրայ: Ձեր հետաքրքրութիւնները անոնց բացարձակ չեն յուզեր: Անոնք կը շահագործեն ձեզ, լիովին համոզուած են, որ ատիկա շատ բնական է, որովհետեւ բոլորը պէտք է զոհաբերուին յանուն իրենց:  
3. Թերահաւատները:

Այս մարդիկ չեն գնահատեր այն լաւը, որ կայ իրենց կեանքին մէջ: Եթէ դուք անոնց ըսէք, «Այսօր հրաշալի, արեւային եղանակ է», անոնք կը պատասխանեն, որ վաղը անձրեւ եւ ցուրտ պիտի ըլլայ: Եթէ անոնց հետ կիսէք ձեր ուրախութիւնը, անոնք անպայման պատճառ մը կը գտնեն ձեզ թունաւորելու:  
- Ինչով վտանգաւոր են:

Այս մարդիկ շրջապատողներէն կը խլեն ուրախութիւնը: Անոնք աշխարհին կը նային բացասաբար, ինչով եւ կը վարակեն բոլորը: Յարաբերելով այսպիսի մարդոց հետ, դուք նոյնպէս կը սկսիք ամէն ինչ մոխրագոյն տեսնել:  
4. Քննադատները:

Եթէ դուք որեւէ բան համարէք աչք շոյող եւ հետաքրքրական, ուրեմն նոյնքան պիտի գնահատեն տարօրինակ եւ անհրապօք:

Եթէ դուք որեւէ մէկը համարէք տաղանդաւոր եւ հեռանկարային, ուրեմն անոնք նոյն անձը պիտի որակեն յիմար եւ անշնորք: Անոնց պէտք է միշտ մէկուն հետ բանավիճիլ, կը կարծեն, որ իրենց կարծիքը միակ ճիշդն է, իսկ անոնք, որոնք համամիտ չեն, յիմարներ են:

-Այսպիսիներուն վտանգը: Անոնք կը փորձեն ողջ աշխարհը յարմարցնել իրենք իրենց եւ ատիկա կը սկսին գիրենք շրջապատողներէն: Այդ մարդիկ չեն հասկնար, որ կեանքը առանց ատոր ալ հետաքրքրական է, որ բոլոր մարդիկ տարբեր են եւ իւրաքանչիւրը ունի իր կարծիքը: Անոնք կը սնանին ժխտական զգացումներով, գորս կը ստանան անվերջանալի բանավէճերու ընթացքին:

5. Երագը սպաննողները: Ամէն անգամ, երբ դուք գաղափարներ կը ծնիք, այդ մարդիկ ձեզի կ'ըսեն, որ անոնց իրականացումը անհնար է: Երբ կ'աշխատիք որեւէ բանի համար, անոնք ձեզ վար կը քաշեն: Երբ դուք կ'երագէք որեւէ բանի մասին, անոնք առաջինը ձեզի կը տեղեկացնեն, որ ձեր երագանքները անիրականանալի են:

-Ինչով վտանգաւոր են երագ սպաննողները: Անոնք սեւեռուած են այն բանի վրայ, որ կայ այժմ, լիովին մերժելով այն, որ կրնար եւ ըլլալ: Անոնք դիւրութեամբ կրնան քանդել ձեր ինքնավստահութիւնն ու հաւատքը սեփական ուժերուն նկատմամբ: Զարգացումն ու ինքնակատարելագործումը հնարաւոր են միայն այն պարագային, երբ մարդը պատրաստ է որեւէ նոր բանի:

6. Երեսպաշտները: Ասոնք այն մարդիկ են, որոնցմէ անընդհատ կեղծաւորութիւն կը յորդի: Երբ դուք գուարձալի պատմութիւն կը պատմէք, ի պատասխան անոնցմէ կը լսէք քաղաքավար ծիծաղ, թէեւ կը նկատէք, որ իրականութեան մէջ անոնց ծիծաղը չի գար: Արեւես անոնք կ'ըսեն, որ կը սիրեն ձեզ, իսկ իրականութեան մէջ ծանօթ մարդոց կը պատմեն, թէ որքան յիմար եւ տհաճ մարդ էք:

-Ասոնց վտանգը: Այդպիսի մարդոց հետ յարաբերութիւնները մակերեսային են եւ անկեղծ չեն: Երբ դուք անոնց օգնութեան կարիքը զգաք, զանոնք չէք գտնել ձեր կողքը: Ձեր հետ ունեցած անոնց ջերմ յարաբերութիւնները ընդամէնը խաբկանք են:

7. Գոհակները: Ասոնք այն մարդիկ են, որոնք սովորութիւն ունին ամէն ինչ ընել ամենաանյարմար պահուն եւ ամենաանյարմար ձեւով: Անոնք ոչինչ չեն կը զգուշանան: Յաճախ այդպիսի մարդոց փոխարէն ստիպուած կ'ըլլաս դուն ամէնալ: -Ինչով վտանգաւոր են ասոնք:

Այս մարդիկ ոչ մէկ չափ ու սահման կը ճանչնան: Անոնք չեն յարգեր այլ մարդոց զգացումները եւ որեւէ ժամանակ կրնան դիւրութեամբ վիրաւորել ձեզ:

Եթէ կարելիութիւն ունիք խուսափելու անոնց հետ յարաբերելէ, ուստի օգտուեցէք այդ հնարաւորութեանէն: Կեանքը բաւական կարճ է, որպէսզի անոնց վրայ ծախսէք ձեր ուժերն ու ժամանակը:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**  
**ՓԱՍՍԻՏԻԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻՒ ԸՄԱՐ)**  
**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻՔՆԵՐՈՒ ԸՄԱՐ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**  
**ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝**  
**ՇԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680**

### ԱՍՏՂԵՐԸ ԻՆՉ Կ'ԸՍԵՆ

**ԽՈՅ** Մարտ 21-Ապրիլ 19  
Այս շաբաթ շատ զբաղուած պիտի ըլլա պտոյտի կարգադրութիւններ ընելով: Անձ մը կրնայ արհամարհել քեզ, սակայն երբէք պիտի չկարողանայ նպատակին հասնիլ:  
Մէկու մը հետ վէճի բռնուելէ զգուշացիր:  
Բախտաւոր թիւերդ են: 2,11,21,33,36

**ՅՈՒԼ** Ապրիլ 20-Մայիս 20  
Այս շաբաթ տկար մտածելով ատելութեամբ լեցուն չար խօսք մը պիտի խօսիս, որը անձի մը հետ յարաբերութիւնդ պիտի վերջացնէ: Կռաւարական անձի մը հետ գործ մը պիտի ունենաս:  
Բախտաւոր թիւերդ են: 3,14,25,30,35

**ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** Մայիս 21-Յունիս 20  
Այս շաբաթ շատ լաւ լուրերով պիտի սփոփուիս եւ սփոփես ընտանիքիդ անդամները: Նեղութիւններդ եւ մտահոգութիւններդ ներսիդի մի կուտակեր, որպէսզի յորդորելով յարաբերութիւններուդ չհազդես:  
Բախտաւոր թիւերդ են: 5,12,24,25,30

**ԽԵՅՉԵՏԻՆ** Յունիս 21-Յուլիս 22  
Այս շաբաթ քու հաւատարմութեամբդ, անիրաւութեամբ ամբաստանուած անձի մը օգտակար պիտի ըլլաս: Քեզի յարմարող հազուատներ ընտրէ: Մի մաքառիր քեզի վայել շրջանակ գտնելու, ընդունէ բարեկամներդ:  
Բախտաւոր թիւերդ են: 7,10,20,28,29

**ԱՌԻԲԾ** Յուլիս 23-Օգոստոս 22  
Այս շաբաթ բաժանումներ կրնան ըլլալ գործիդ եւ աշխատակիցներուդ միջեւ, փորձէ խորհուրդներդ եւ միտքդ հաստատել շինիչ տուեալներու վրայ: Սէրը ամէն բան կը մոռցնէ, սիրող եւ ներող եղիր:  
Բախտաւոր թիւերդ են: 8,15,19,23,26

**ԿՈՅՍ** Օգոստոս 23-Սեպտեմբեր 22  
Այս շաբաթ շքանշան մը կրնաս ստանալ եւ շատ ուրախանալ որ արժանի եղար գնահատանքի: Մի նուաստացներ կողակիցդ, նկատի առ որ ան ալ պէտքը ունի ցուցնուքներուդ:  
Բախտաւոր թիւերդ են: 1,8,13,22,25

**ԿՇԻՈՔ** Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22  
Այս շաբաթ թերութիւններդ վերատեսելու լաւագոյն առիթները պիտի ներկայանան քեզի: Գործդ կորսնցնելու վախի պատճառով, մի զիջիր արժանապատուութիւնդ վիրտրող հարցերու դիմաց: Վճռական եղիր:  
Բախտաւոր թիւերդ են: 4,19,27,29,35

**ԿԱՐԻԾ** Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21  
Այս շաբաթ պտըտելու լաւ եւ յարմար առիթներ պիտի ներկայանան քեզի: Հաճախ հակամէտ ես զոհաբերութեամբ ծարայելու, սակայն անոր կողքին, լաւ է որ նոյնպէս դուն քեզ զոհացնես: Չզուշուրեմք ինքնաշարժ վարէ:  
Բախտաւոր թիւերդ են: 5,17,24,26,33

**ԱՂԵՂՆԱԲՈՐ** Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21  
Այս շաբաթ հակառակ սեռի պատկանող անձի մը հետ նոր ծանօթութիւն պիտի կնքես: Ձբաղուած ըլլալուդ պատճառաւ՝ շատ մը ծրագիրներդ պիտի ձախողին: Ինքզինքդ մի վնասեր վատ եւ վնասակար ուտելիքներով:  
Բախտաւոր թիւերդ են: 5,11,18,25,29

**ԱՅԾԵՂՋԻՐ** Դեկտեմբեր 22-Յունուար 19  
Այս շաբաթ ուրախ լուրերով լեցուն շաբաթ մը պիտի ըլլայ: Պատրաստուէ անակնկալներու: Ծաղրանքի նիւթ չդառնալու համար խոստումներուդ տէրը եղիր եւ ներկայութիւնդ փաստէ:  
Բախտաւոր թիւերդ են: 2,17,24,31,34

**ԾՈՎԱՆՈՅՇ** Յունուար 20-Փետրուար 18  
Այս շաբաթ պիտի յաղթահարես երկար ժամանակէ ունեցած վախերդ մէկուն: Իսկական սէրը զոհողութեան կը կարօտի: Յաճախ ճշմարտութիւնը բնտոռող եւ իրագործող ես, անոր համար կը սիրուիս եւ յարգուիս:  
Բախտաւոր թիւերդ են: 2,5,8,22,34

**ՉՈՒԿ** Փետրուար 19-Մարտ 20  
Այս շաբաթ սխալ տեղեկութիւն մը բարկութիւն պիտի յառաջացնէ մէջդ: Հեզման վերաբերումը մի ունենար գործընկերոջդ հետ: Լաւ նկարագրի անհատ մըն ես, շարունակ լաւութիւն ընել:  
Բախտաւոր թիւերդ են: 9,11,17,25,34

### ՔԻՐՈՏ ՄԵԾՑԱԾ, ԲՈՆԻ ԹՐՔԱՑԱԾ, ԱՅԺՄ ՅԱՅ ԿՈՉՈՒՈՂ

Շարունակուած էջ 7-էն

այլեւի Հաթիճէ Ալթընըշըքի, որ անդամ է Ժողովուրդներու Ժողովրդավարական կուսակցութեան (ԺԺԿ) կեդրոնական գործադիր խորհուրդին: Ան «Ալ-Մոնիթըր»-ին յայտնեց. «Տասնամեակներ շարունակ Թուրքիոյ մէջ կառավարութիւնները փորձեցին Անատոլուն ձեռքազատել հայկական ինքնութեան որեւէ հետքէ: Սպանութիւններն ու բռնի տեղահանութիւնները բաւարար չէին: Քաղաքներու, փողոցներու եւ նոյնիսկ ճաշերու անունները փոխուեցան: Եկեղեցիները մզկիթներու վերածուեցան: Անոնք փորձեցին պատմութիւնը վերախմբագրել: Այժմ 9 օրերէ ի վեր կրակմարի դրութեան տակ զանուող ձիգրէի Ժողովուրդին կ'ըսեն. «Դուք բոլորդ ալ հայեր էք»: Ասիկա մեզի ցոյց կու տայ, որ շինծու «մէկ ժողովուրդ, մէկ հաւատք»-ը տապալած է: Անոնք ձախողած են պատմութեան հայկական հետքերը ջնջել»:

ԺԺԿ-ի փոխնախագահ Ալի Ալթինորս «Ալ-Մոնիթըր»-ի յայտնած է. «1990-ականներէն ի վեր պաշտօնական կեցուածքը փորձած է ՔԱԿ-ը հասարակութենէն հեռացնել, զայն պիտակելով իբրեւ հայկական»: Յաճախ կարելի է հանդիպիլ «անոնք թլփատուած չեն», «հայկական հունտ» եւ «ԱՍԱԼԱ-ն վերջ գտաւ, երբ ՔԱԿ-ը սկսաւ»-ի նման նշանաբաններու:

«Նորութիւնը այն է, որ անոնք կ'ըսէին, որ ՔԱԿ-ի անդամները հայ են եւ ոչ թէ քիւրտ, սակայն այժմ անոնք շրջանին մէջ բոլոր քիւրտներուն վրայ կը տարածեն հայ ըլլալու «ամբաստանութիւնը», ըսած է Ալթինորս:

Ամերիկայի հայկական համագումարէն շրջանային վերլուծաբան եւ «Ակօս»-ի թղթակից Ալին Օզինեան «Ալ-Մոնիթըր»-ին յայտնեց. «Ժողովուրդներու ժողովրդավարական կուսակցութեան շրջողութիւնը ցոյց տուաւ, որ զայն միայն իբրեւ քրտական կուսակ-

ցութիւն մը պիտակելու ջանքերը ձախողեցան: Ուստի կուսակցութեան հայհոյելու համար այժմ պէտք է այլ պիտակ փնտռեն, եւ հայը անոնց գտած չուեզոյն պիտակն է: Սակայն եթէ մտածէք, քիւրտները որոշ չափով հայկական արիւն ունին»: Հաւանաբար: Ճիշդ թուրքերուն նման: Գիտենք, թէ բազմաթիւ հայ մանուկներ լքուեցան, եւ այսօր իբրեւ թաքուն հայեր անոնց կարգ մը պատմութիւնները կը լսենք»:

Թրքահայ Պետօ Կեսարացի, հարցը կը դիտէ հետաքրքրական տեսանկիւնէ մը: Ան «Ալ-Մոնիթըր»-ին ըսաւ. «Այսօր մէկ հայ կոչելը մէկ քարով երկու թռչուն զարնել է: Պետութեան ընդդիմացող ունէ մէկը արժանի է այն վարձուքին, որուն ատենին արժանացան հայերը: Աւելին, հայկական ինքնութիւնը ՔԱԿ-ին կապելը նպատակաւ է կառավարութեան, որովհետեւ չեն կրնար բոլոր քիւրտները քիւրտ ըլլալուն համար պատժել, պարզապէս, որովհետեւ չեն ուզեր բոլոր քիւրտները օտարել»:

Կը նկատենք, որ «անոնք հայեր են» պիտակին թիրախը բարեպաշտ քիւրտներն են, որպէսզի զանոնք հեռացնեն անոնցմէ, որոնք ԺԺԿ-ի կրնան համակրիլ եւ սիրաշահին ծայրայեղ ազգայնական քուէարկողները հայրենասիրութեան կրակը հրահրելով: Ամբոխավարական քաղաքականութեանց հեռահաս հետեւանքները ասարկու են: Մինչ Թուրքիոյ մէջ լարուածութիւնը աճ կ'արձանագրէ, փոքրամասնութիւններուն անդամ ըլլալը դարձեալ վախի աղբիւրի կը վերածուի եւ մարդիկ կը փորձեն իրենց ինքնութիւնը ծածկել:

Տիրապետողութեան Մարի Էսկիճի անգամ մը ըսաւ. «Մենք ծնունդով հայ ենք, մեծնալու ընթացքին քիւրտ եւ հասուն տարիքնուն՝ թուրք»: Այդ նախադասութիւնը ինքնի ն պէտք է Թուրքիոյ մէջ բնակող ունէ մէկը խորապէս մտահոգէ:

### ԱՄՆ-Ի ՀՐԵԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Շարունակուած էջ 6-էն

Յայտարարութեան մէջ կոչ կ'ուղղուի հրէական համայնքին սերտորէն աջակցիլ ամերիկահայ խումբերու հետ՝ Ցեղասպանութեան ճանաչման գործընթացի համար: Աւելի վաղ Իսրայէլի միջկրօնական յարաբերութիւններու հրէական խորհուրդը հանդէս եկած է Հայոց ցեղասպանու-

թիւնը ճանաչող յայտարարութեամբ եւ կոչ ըրած է Իսրայէլի պետութեանը հետեւիլ իր օրինակին: Հայոց ցեղասպանութիւնը ճանաչող եւ դատապարտող յայտարարութիւններ ընդունիլ նաեւ ԱՄՆ-ի Մասաչուսեթս նահանգի Ռաբբինների վարչութիւնը եւ ԱՄՆ-ի Ատլանտա քաղաքի Միջհամայնքային յարաբերութիւններու խորհուրդը:


### JOB OPPORTUNITY

ConnectTo Security has an immediate opening for an alarm installer position. Training will be provided. Must speak English well.  
www.ConnectTo.com  
Please email resume to: jobs@ConnectTo.com; call 818-546-4602

### ԳՈՐԾԻ ԱՌԻԹ

Connect To Security ընկերութիւնը կարիքը ունի alarm տեղադրող պաշտօնեայի մը: Մենք կը մարզենք թեկնածուն: Լաւ Անգլերէն գիտնալը պայման է: Հետաքրքրուողները կրնան ի-նքնակ ուղարկել jobs@ConnectTo.com հասցէին եւ կամ հեռաձայնել 818-546-4602: www.ConnectTo.com:

ՄԱՐԱԶԴ



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԺԵՐԷՅԻԱՆ

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբօր, հօրեղբօր, քեռիին, խնամիին ու հարազատին՝ Յովհաննէս (Շիրազ) ձէրէճեանին մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, Հոկտեմբեր 20, 2015ին, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը տեղի ունենցաւ Չորեքշաբթի, Հոկտեմբեր 28, առաւօտեան ժամը 10.30ին, Սրբոց Ղեկնողեանց մայր տաճարին մէջ (3325 West Glenoaks Blvd., Burbank), իսկ յուղարկաւորութիւնը՝ Պըրպէյքի Hollywood Hills Forest Lawn գերեզմանատան մէջ:

Սգակիրներ՝ Կինը՝ Սօնա ձէրէճեան Զաւակները՝ Տարօն և Շաքէ ձէրէճեան և զաւակները Դուստրը՝ Մարալ և Յակոբ ձէրէճեան Գոճիկեան և զաւակները Եղբայրը՝ գերշ. Տարօն եպս. ձէրէճեան (Ֆրանսա) Եղբայրը՝ Կարապետ և Լուսին ձէրէճեան և զաւակները (Լիբանան) Քոյրը՝ Մարի Փօլատեան և զաւակները (Ֆրանսա) Եւ համայն ձէրէճեան, Քէշիշեան, Գոճիկեան, Սրուբեան և Փօլատեան ընտանիքներն ու հարազատները:

Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը խնայուի կատարել Փասատիմայի St. Gregory A & M Hovsepian Schoolին:

ԳՈՅԺ

ՈՉ ԵՄ Է ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԵՄԵԱՆ

Խոր ցաւով իմացանք հնչակեան կուսակցութեան գաղափարաւոր էր եւ երկարամեայ գործիչ ու արուեստագէտ լուսանկարիչ Յովհաննէս ձէրէճեանի (Շիրազ) մահը, որ պատահեցաւ Հոկտեմբերի 20ին, յետ կարճատեւ հիւանդութեան: Մեր խորագրաց վշտակցութիւնները հանգուցեալի աչրիին, զաւակներուն եւ համայն ընտանեկան պարագաներուն:

ՅԱԲԱԿՅԱԿԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԺԵՐԷՅԻԱՆԻ (Շիրազ) մահուան տխուր առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութիւնն ու անդամները իրենց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցելի աչրիին ՍՈՒՄ ձէրէճեանին, եղբայրներուն, զաւակներուն, քրոջ եւ համայն հարազատներուն:

ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԺԵՐԷՅԻԱՆԻ մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Յարութ եւ Լուսին Պոյաճեան, իրենց խորագրաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի համայն հարազատներուն: Առ այդ փոխան ծաղկեպսակի 100 տոլար կը նուիրեն «Մասիս»ի բարգաւաճման ֆոնտին:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱԲԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ 96ՐԴ ՏԱՐԵԺՈՂՈՎ

Շարունակուած էջ 15-էն

տերու ընթացքին, ինչպէս նաեւ ԱՀԱԼ-ի վարչական եւ Տարեկան ժողովին, եւ յատկապէս Շաբաթ երեկոյեան տեղի ունեցող Տարեկան ճաշկերոյթին, Վեր. Յարութիւն Սեւիմեան, Համայնքապետը Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքին, ներկայացուց Սուրիոյ ներկայ իրավիճակն ու մղձաւանջը, եւ այն մարտահրաւէրները, որոնց դիմաց կանգնած են ամէն օր, եւ թէ ինչպէս Աստուած կ'առաջնորդէ եւ կը գինէ գիրենք դիմազրաւելու այդ մարտահրաւէրները ԱՀԱԼ-ի աշակցութեամբ:

Շաբաթ երեկոյեան՝ աւելի քան 250 հիւրերու ներկայութեամբ տեղի ունեցող ԱՀԱԼ-ի տարեկան ճաշկե-

րոյթը, San Francisco Airport Marriott Waterfront Պանդոկի շքեղ սրահին մէջ, իսկապէս տօնական եւ գոհաբանութեան առիթ մըն էր երախտագիտութիւն յայտնելու Աստուծոյ հրաշագործ ձեռքին՝ անցնող դարու ընթացքին: Ճաշկերոյթի յանձնախումբի ատենապետուհի՝ վալիւնա Աղպապեան բարի գալուստ մաղթեց ներկայներուն եւ ներկայացուց օրուան հանդիսավար՝ Տօքթ. ձէրի Մանուկեանը: Տօքթ. Մանուկեան ձեռնհասօրէն վարեց ճաշկերոյթի յայտագիրը, որու ընթացքին ներկայացուցեց յատուկ տեսանկյուն մը աշխարհի տարբեր անկիւններու մէջ տեղի ունեցող ԱՀԱԼ-ի գործունէութիւններուն մասին:

Օրուան Պատգամաբեր՝ Վեր. Յարութիւն Սեւիմեանի վերը յիշ-

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ



ՆԱԶԱՐԷԹ ԱԶԱՊԱՀԵԱՆ

Հանգուցեալ ՆԱԶԱՐԷԹ ԱԶԱՊԱՀԵԱՆԻ մահուան առջին տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, Նոյեմբեր 8ին, Փասատիմայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցոյ մէջ, 2215 E. Colorado Blvd., Pasadena, յաւարտ Ս. Պատարագի:

Սգակիրներ՝ Նարինէ Աջապահեան Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Նորա Աջապահեան եւ զաւակունք Այրի Տիկին Անգինէ Աջապահեան եւ որդին Այրի Տիկին Մարիա Ղազարեան եւ զաւակները (Պէյրութ) Տէր եւ Տիկ. Վահէ եւ Մարօ Աջապահեան եւ զաւակները Հոգեհանգստեան պաշտօնէն ետք հոգեսուրճ պիտի մատուցուի եկեղեցոյ «Եկաւեան» սրահին մէջ: Յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆ

Հանգուցեալ ՄԻՀՐԱՆ ԿՈՍՏԱՆԵԱՆ մահուան տխուր առիթով աչրին Տիկ. Հերմինէ Կոստանեան \$100 տոլար կը նուիրէ «Մասիս»ի ֆոնտին:

ՈՒՂՂՈՒՄ

Մեր նախորդ թիւով ՄԻՀՐԱՆ ԿՈՍՏԱՆԵԱՆԻ հոգեհանգստեան ծանուցման մէջ սգակիրներուն բաժինին առաջին տողը պէտք է կարդաւ «աչրին՝ Հերմինէ Կոստանեան»:

ուած խօսքերով արտայայտուած՝ Աստուծոյ գորութիւնը ակնյայտ էր նոյնիսկ անոնց դիմազրաւած ներկայ փորձութիւններուն մէջ: Աստուծոյ հաւատարմութիւնը նաեւ ակնյայտ էր ճաշկերոյթի ընթացքին, երբ յատուկ յարգանքի տուրք կը մատուցուէր ԱՀԱԼ-ի նախկին վարիչ Քարտուղարներուն եւ Տնօրէններուն.- Վեր. Միհրան Գալաչեան (1919-1921), Վեր. Անդրանիկ Պետիկեան (1921-1928, 1929-1930, 1943-1946), Վեր. Մանասէ Փափազեան (1928-1929), Վեր. Դոկտ. Երուանդ Հատիտեան (1930-1934), Վեր. Նշան Պէկեան (1935-1943), Վեր. Բիւզանդ Գալաչեան (1946-1959), Վեր. Եղուարթ Թովմասեան (1959-1968), Սթիվըն Մարտիկեան (1968), Վեր. Դոկտ. Կիրակոս Չփուրեան (1969-1987), Վեր. Դոկտ. Մովսէս Ճանապահեան (1987-2000), Էնտի Թորիկեան (2001, 2003, 2004-2009), Վեր. Ժիրայր Սողոմեան (2001-2003), Վեր. Դոկտ. Փիթըր Տողրամճի (2004), Լեւոն Ֆիլեան, (2010-2013) եւ Վեր. Մկրտիչ Մելքոնեան (2014): Իւրաքանչիւրին կատարած ծառայութիւնները եւ անոնց ունեցած ներդրումը ներկայացուցին ներկայ վարիչ Տնօրէն՝ Զաւէն Խանճեան եւ Նախագահ՝ Տօքթ. Նազարէթ Տարագճեան: Յուզիչ էր տեսնել վերջին տարիներու վարիչ Տնօրէններու կողքին, մեզմէ առ յաւիտ բաժնուած Աստուծոյ ծառաներու ընտանիքի անդամներուն ներկայութիւնը: Մինչ անոնք կը ստանալին իրենց խորհրդանշական նուէրները, ներկայները կրցան տեսնել եւ զգալ այն կապը զոր ԱՀԱԼ-ը ունեցած էր Աստուծոյ այս ծառաներուն հետ, որոնք այսօր կը հանգչին իրենց գործերէն Աստուծոյ ներկայութեան մէջ: Իսկապէս Աստուծոյ հանգէպ երախտագիտութեան պահ

մըն էր, որ նաեւ կը զօրացնէր մեր կապակցութիւնը իրարու հետ: Ճաշկերոյթի ընթացքին յատուկ գնահատանքի արժանացան նաեւ Մարկօ Կիւլչէսէրեան, Արփի Հալչպլեան, Ռանի Հէնէսեան եւ Կյօրիա Մեծեան իրենց 25-ամեայ ծառայութեան համար որպէս հիմնադիրներ եւ Ատենապետուհիներ ԱՀԱԼ-ի Peninsula Մասնաճիւղին: Գործադիր Տնօրէն՝ Զաւէն Խանճեան, ոգեւորեց Մասնաճիւղի անդամները, որպէսզի վերականգնան նաեւ յատուկ եւ կարեւոր ծառայութիւնը մեր մանուկներուն՝ ԱՀԱԼ-ի միջոցով: Այս գեղեցիկ շաբաթավերջը իր գաղաթնակէտին հասաւ Կիրակի Օրուան Պաշտամունքով, որ տեղի ունեցաւ Հայ Աւետարանական Գողգոթիա Եկեղեցիին մէջ: Օրուան պատգամաբերներն էին Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան Նախագահ՝ Վեր. Մկրտիչ Գարակէօզեան եւ Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Միութեան Հովիւ՝ Վեր. Պերճ Ճամպազեան: Եկեղեցիին երգչախումբը եւ նուագախումբը ճոխացուցին Պաշտամունքը իրենց երաժշտութեամբ եւ ՀԱՀԻ-ի վարիչ Քարտուղար՝ Վեր. Դոկտ. Վահան Թութիկեան Պաշտամունքը իր աւարտին հասցուց ԱՀԱԼ-ի վարչական խորհուրդի նորընտիր անդամներու պաշտօնակոչութեան արարողութեամբ: Հիւրընկալ Եկեղեցիի հովիւ՝ Վեր. Ներսէս Պալապանեան, նաեւ յիշեց անունները այն բոլոր հովիւներուն եւ ԱՀԱԼ-ի անդամներուն, որոնք անցնող տարեշրջանին իրենց կեանքի ընթացքը աւարտելով անցած էին յաւիտեանականութեան:

### ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԱՐՄՆԱՄԱՐՁՈՒՅԻ ԿՈՒՆԵՆԱՅ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒՄ

99 տոկոսով մենք մարմնամարզու թիւնից մէկ օլիմպիական ուղեգիր ունենք Ռիօ-2016-ում: Պատմութեան մէջ առաջին անգամ Օլիմպիական խաղերի մարմնամարզութեան մրցաշարում Հայաստանը կ'ունենայ կին ներկայացուցիչ, որը կը լինի Հուլի Գեբեշեանը:



Այս մասին NEWS.am Sport-ի թղթակցի հետ զրոյցում ասաց մարմնամարզութեան Հայաստանի հաւաքականի գլխաւոր մարզիչ Յակոբ Սերոբեանը Շոտլանդիայի մայրաքաղաք Գլազգոյից, որտեղ Հոկտեմբերի 23-ին մեկնարկել է մարմնամարզութեան աշխարհի առաջնութիւնը:

Հայաստանը աշխարհի առաջնութեանը մասնակցում է 4 մարմնամարզիկներով՝ Արթուր Դաւթեան (բազմամարտ), Յարութիւն Մերդինեան (նժույզի թափեր), Վահագն Դաւթեան (օդակների վարժութիւն), իսկ կանանց մրցաշարում Հայաստանը ներկայացնում է Հուլի Գեբեշեանը: Ամերիկահայ մարզուհին արդէն աւարտել է իր մրցելուցի աշխարհի առաջնութիւնում եւ շատ մօտ է Ռիօ դէ Ժանեյրոյում կայանալիք Օլիմպիական խաղերի ուղեգիր նուաճելուն:

### ԼԵՒՈՆ ԱՐՈՆԵԱՆԸ՝ ԵՐՈՊԱՅԻ ԱԿՈՒՄԲԱՅԻՆ ԱՆՈՅԵԱՆ

Հայաստանի հաւաքականի առաջատար Լեւոն Արոնեանը ռուսական «Սիբիրի» կազմում դարձել է ճատրակի Եւրոպայի ախոյեան:



Մակեդոնիայի մայրաքաղաք Սկոպյէյում աւարտուած Եւրոպայի ախոյեանի առաջնութիւնում ռուսական թիմը հաւաքել է 13 միաւոր եւ 2 միաւոր առաջ է անցել երկրորդ տեղը գրաւած ատրպէյճանական «Սոցարից»: Հայկական ճատրակի առաջատարը «Սիբիրում» խաղում էր երկրորդ խաղատախտակի վրայ:

«Սիբիրի» կազմում ընդգրկուած են եղել նաեւ գրոսմայստերներ Վլադիմիր Կրամնիկը, Ալեքսանդր Գրիշչուկը, Լի Չաոն, Վանգ Յեն, Անտոն Կորոբովը, Դմիտրի Կոկարեւը եւ Դմիտրի Բոչարովը:

Կանանց Հայաստանի հաւաքականի ներկայացուցիչ Լիլիթ Մկրտչեանը «Յուգոսլաւի» կազմում դարձել է Եւրոպայի առաջնութեան պրոնզէ մետալակիր: «Յուգոսլաւի» վաստակել է 9 միաւոր, իսկ Եւրոպայի ախոյեան է դարձել 12 միաւոր հաւաքած վրացական «Նոնան»: Մկրտչեանը «Յուգոսլաւի» երրորդ համարն էր:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ 11-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄՈՒ ՓԻՆԻԿԸ ՅԱՂԹԵՑ ՇԻՐԱԿԻՆ

Հայաստանի ֆուտբոլի ախոյեանութեան 11-րդ հանգրուանին, երկրորդ դիրքը գրաւող Կիւմրիի «Շիրակ»ը իր դաշտին վրայ պարտուեցաւ երրորդ դիրքը գրաւող «Փիւնիկ»էն եւ նա-հանջեց 4-րդ դիրք: Իսկ Երեւանի «Արարատ»-ը իր դաշտին վրայ հաւասարեցաւ «Բանանց»ին հետ: Թէեւ մրցումին վտանգաւոր պահերը ստեղծեց «Արարատ»ը, սակայն Ջաւէն Պուլուժը կորսնցուց երկու ստույգ առիթներ: Այս հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Արարատ - Բանանց 0-0
- Շիրակ Կիւմրի - Փիւնիկ 0-2
- կոլեր.Վ.Պողոսեան 55, Վ.Սաթումեան 78,
- Ուլիս - Ալաշկերտ 0-3
- կոլեր. Մ. Մանասեան 57, 61, պրագիլցի Հեպէր 79,
- Գանձասար Կապան - Միքա 2-1
- կոլեր. ռուս Ա.Պուրաեւ 70, վրացի Կ. Կոկաթիշվիլի 80 - ռուս Թ. Թոպոեւ 61,
- Դասաւորում.
- 1-Ալաշկերտ 24 կէտ,
- 2-Փիւնիկ 20 կէտ,
- 3-Գանձասար 20 կէտ,
- Ռմբարկուներ.
- 1- Մ. Մանասեան (Ալաշկերտ) 10 կոլ,
- 2-Հեպէր(Ալաշկերտ) 9 կոլ,
- 3-Ա.Պ ուրաեւ (Գանձասար) 5 կոլ,

### ԱՐԹՈՒՐ ԴԱԻԹԵԱՆԸ ՀԻԱՆԱԼԻ ՀԱՆԴԵՍ ԵԿԱԲ ԵՒ ԿԸ ՆՈՒԱԾԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՈՒՂԵԳԻՐ

Մարմնամարզութեան Հայաստանի հաւաքականի գլխաւոր մարզիչ Յակոբ Սերոբեանը Շոտլանդիայի մայրաքաղաք Գլազգոյից NEWS.am Sport-ի թղթակցի հետ զրոյցում ամփոփել է Հայաստանի 3 ներկայացուցիչների ելուցներն աշխարհի առաջնութիւնում: Աշխարհի առաջնութեան տղամարդկանց պայքարին Հայաստանը ներկայացել է 3 մարմնամարզիկներով՝ Արթուր Դաւթեան (բազմամարտ), Յարութիւն Մերդինեան (նժույզի թափեր) եւ Վահագն Դաւթեան (օդակների վարժութիւն):

«Հայաստանի հաւաքականի 3 ներկայացուցիչները հրաշալի ելուց ունեցան աշխարհի առաջնութիւնում: Արթուր Դաւթեանը լիարժէք հանդէս եկաւ բազմամարտում՝ հաւաքելով ամենաբարձր միաւորները: Նա լաւ կատարեց բոլոր՝ 6 վարժութիւնները: Արթուրը 100 տոկոսով արժանացել է օլիմպիական վարկանիշների եւ համոզուած եմ, որ կը նուաճի Օլիմպիական խաղերի ուղեգիր:

Յարութիւն Մերդինեանը դուրս է եկել նժույզի թափեր վարժութեան եզրափակիչ, եւ մենք ապահովել ենք առնուազն արծաթէ մետալ: Նույնը կ'ասեմ Վահագն Դաւթեանի մասին. նա եւս եզրափակիչում է:

### ՄԵՍԻՆ ԱՄԵՆԱԹԱՆԿ ԲՐԵՆԴԵՐԻ ԹԻՈՒՄ ԶԷ, ՌՈՆԱԼԴՈՒՆ 8-ՐԴՆ Է

Forbes-ը ներկայացրել է 2015թ. աշխարհի ամենաթանկ բրենդերը մարզիկների շրջանում: Առաջին տեղում է ամերիկացի գոլֆիստ Թայգեր Վուդսը, որի բրենդը գնահատուած է 30 միլիոն եւրօ: Երկրորդը մէկ այլ գոլֆիստ Ֆիլ Միկելսոնն է, որին յաջորդում են «Քլիվլենդի» բասկետբոլիստ Լեբրոն Ջեյմսը եւ աշխարհի նախկին առաջին տակետ Ռոջեր Ֆեդերերը:



«Բարսելոնայի» եւ ֆուտպոլի Արգենտինայի հաւաքականի յարձակուող Լիոնէլ Մեսին չի ընդգրկուել ցուցակում, իսկ Մադրիդի «Ռէալի» առաջատար Կրիշտիանու Ռոնալդուն յայտնուել է 8-րդ տեղում:

2014-ին Մեսին 9-րդն էր այս ցուցակում, իսկ նրա բրենդը 12 միլիոն սուլար էր:

### ԱՇԽԱՐԿԻ ԱՄԵՆԱԹԱՆԿ ԲՐԵՆԴԵՐԸ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

1. Թայգեր Վուդս (ԱՄՆ, գոլֆ) - 30 միլիոն դոլար
2. Ֆիլ Միկելսոն (ԱՄՆ, գոլֆ)- 28
- 3-4. Լեբրոն Ջեյմս (ԱՄՆ, բասկետբոլ)-27
- 3-4. Ռոջեր Ֆեդերեր (Շուէյցարիա, թենիս)-27
5. Մեխենդա Սինգհ Դոնի (Հնդկաստան, կրիկետ)-21
6. Ուլսէն Բոլթ (Ջամայկա, աթլետիկա)-18
7. Կեւին Դիւրանտ (ԱՄՆ, պասքետպոլ)-18
8. Կրիշտիանու Ռոնալդու (Պորտուգալիա, ֆուտպոլ)-16
9. Ռոբի Մակլիլլոյ (Հիւսիսային Իռլանդիա, գոլֆ)-12
10. Ֆլոյդ Մէյվերդեր-Կրոսսեր (ՄԱՆ, բռնցքամարտ)-11,5

### ԱՍԻԱԿԱՆ ՖՈՒՏՊՈԼԱՅԻՆ ԿՈՆՖԵՐԵՆՍԻԱՅԻ ԴԵԿԱՎԱՐԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ ՖԻՖԱ-Ի ՆԱԽԱԳԱՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

Ասիական ֆուտպոլային կոնֆերանսի ղեկավար Սալման բին Իբրահիմ Ալ-Հալիֆան առաջադրուել է ՖԻՖԱ-ի նախագահի պաշտօնում, յայտնում է The Guardian-ը:



Շէյխ Սալիմանը 2013-ից է ղեկավարում ասիական ֆուտպոլը: Աւելի վաղ նա աջակցել էր ՖԻՖԱ-ի ղեկավար Յոզեֆ Բլատերին եւ փոխնախագահ Միշել Պլատինին, որոնք 90 օրով զրկուել են իրենց լիազորութիւններից:

ՖԻՖԱ-ի նախագահական արտահերթ ընտրութիւնները կ'անցկացուի 2016-ի փետրուարի 26-ին Յիւրիխում: Աւելի վաղ ընտրութիւններում իրենց մասնկցութիւնը հաստատել էին Տրինիդադ եւ Տոբագոյի հաւաքականի նախկին աւագ Դեւիդ Նահիդը, Յորդանանի արքայազն Ալի բին Ալ-Հուսէյնը, Ուեթնամ-ի նախագահ Միշել Պլատինին եւ ՖԻՖԱ-ի գլխաւոր քարտուղարի տեղակալ Ժերոմ Շամիլը:

Ուեթնամ-ի գլխաւոր քարտուղար Ջանի Ինֆանտինոն նույնպէս կը մասնակցի ՖԻՖԱ-ի նախագահական արտահերթ ընտրութիւններին: Այդ մասին յայտնել է Ռուսաստանի ֆուտպոլային միութեան ղեկավար Վիտալի Մուսկոն, որը նշել է, որ Ուեթնամ-ի գործկոմը հաւանութիւն է տուել Ինֆանտինոյի թեկնածութեանը:

Փետրուարի 26-ին Յիւրիխում կայանալիք ընտրութիւններին մասնակցելու մասին յայտնել է նաեւ Լիպիայի ֆուտպոլի ֆեդերացիայի ղեկավար Մուսա Բիլիտին: